

ԱՄԵՆԱՄՍՅԱ ՏԵՂԵԿԱԳԻՐ՝ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՕԳՈՍՏՈՍ 2025



ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

«Հայաստանի Հանրապետությունից արտահանման և Հայաստանի Հանրապետություն ներմուծման համար արգելված սնդիկի հավելիչով արտադրանքի ցանկը սահմանելու մասին» (N1071-Ն, ընդունված՝ 07.08.2025թ., ուժի մեջ՝ 16.08.2025թ., գործում է 6 ամիս ժամկետով)

- «Սնդիկի մասին» 23.03.2022թ. ՀՕ-84-Ն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին համապատասխան Կառավարությունը սահմանում է սնդիկի հավելիչով արտադրանքի ցանկը, որոնց արտահանումը ՀՀ-ից և ներմուծումը ՀՀ արգելվում է: ԵՏՄ կարգավորումներին համապատասխան՝ անդամ պետությունը միակողմանի արտահանման կամ ներմուծման արգելք կարող է սահմանել 6 ամսյա ժամկետով:
- Ըստ այդմ, Կառավարությունը պարբերաբար սահմանում է նշված ցանկերը: Կառավարության նախորդ որոշումը 13.02.2025թ. N139-Ն որոշումն է, որն ուժի մեջ է մտել 16.02.2025թ. և գործում է մինչև 16.08.2025թ.: Որոշմամբ հերթական անգամ 6 ամսյա ժամկետով սահմանվել է արտահանման և ներմուծման համար արգելված սնդիկի հավելիչով ապրանքների ցանկը, որը մնացել է անփոփոխ՝ առաջնային մարտկոցներ՝ սնդիկ-օքսիդային, սնդիկային լամպեր սնդիկային, ոչ էլեկտրոնային չափման միջոցներ՝ բարոմետրեր, հիգրոմետրեր, մանոմետրեր, ջերմաչափեր, սֆիգմոմանոմետրեր, սնդիկի քլորիդ, սնդիկի երկքլորիդ, սնդիկի ցիանիդ, սնդիկի օքսիցիանիդ: Միաժամանակ, շարունակում են գործել արգելքի նույն բացառությունները, որ արգելքը չի տարածվում՝
- 1. այն արտադրանքի վրա, որոնց մաքսային ընթացակարգով ձևակերպման ժամանակ առկա է ներմուծողի կամ արտահանողի կողմից կազմված և հաստատված գրավոր հայտարարագիրը՝ քաղաքացիական պաշտպանության, ռազմական, հետազոտությունների և որպես չափանմուշ օգտագործման նպատակով արտադրանքի անհրաժեշտության վերաբերյալ.
- 2. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների վրա:

«Հայաստանի Հանրապետություն պողպատե ամրանների ներմուծման լիցենզավորման ընթացակարգը և հիմնական լիցենզիայի ձևը սահմանելու մասին» (N1077-Ն, ընդունված՝ 07.08.2025թ., ուժի մեջ՝ 08.08.2025թ.)

- «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» 03.07.2025թ. ՀՕ-232-Ն օրենքով ԵԱՏՄ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 7214 և 7215 ապրանքային դիրքերին դասվող պողպատե ամրանների՝ «Բացթողում» ներքին սպառման համար», «Վերամշակում» մաքսային տարածքում» և «Վերամշակում» ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով յուրաքանչյուր մինչև մեկ տոննայի ներմուծման լիցենզիա տրամադրելու համար սահմանվել է պետական տուրք՝ բազային տուրքի 29-ապատիկի չափով:
- Կառավարության որոշմամբ սահմանվում են պողպատե ամրանների ներմուծման լիցենզավորման ընթացակարգը և հիմնական լիցենզիայի ձևի հաստատման կարգը: Որոշման ընդունումը հնարավորություն է տալիս ապահովելու «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» օրենքով ամրագրվող դրույթների կիրարկումը: ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ դասակարգչի 7214 և 7215 ապրանքային դիրքերում դասակարգվող պողպատե ամրանների «Բացթողում» ներքին սպառման համար», «Վերամշակում» մաքսային տարածքում» և «Վերամշակում» ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով ներմուծումն իրականացվում է հիմնական լիցենզիայի հիման վրա: Հիմնական լիցենզիան տրամադրվում է յուրաքանչյուր մինչև մեկ տոննայի համար:

«Գործարքի առարկա, բաժնեմասի (բաժնետոմսի, փայի) և լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ հիմնական գույքի կամ դրանց նկատմամբ իրավունքի օտարման, այլ կերպ փոխանցման կամ գրավադրման կամ դրանց նկատմամբ իրավունքի ձեռքբերման նախապատվության իրավունքի իրացնելու կարգը սահմանելու մասին» (N1094-Ն, ընդունված՝ 07.08.2025թ., ուժի մեջ՝ 08.08.2025թ.)

- Կարգով սահմանվում են էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող անձանց, 25 և ավելի տոկոս բաժնեմասի (բաժնետոմսի, փայի) և լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ հիմնական գույքի կամ դրանց նկատմամբ իրավունքի օտարման, այլ կերպ փոխանցման կամ գրավադրման, ինչպես նաև լիցենզիա ունեցող անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն տվող բաժնեմասի (բաժնետոմսի, փայի)՝ անկախ քանակից, օտարման, այլ կերպ փոխանցման կամ գրավադրման դեպքում գործարքի առարկա բաժնեմասի (բաժնետոմսի, փայի), կամ դրանց նկատմամբ իրավունքի ձեռքբերման նախապատվության իրավունքի հետ կապված հարաբերությունները:
- Կարգը չի տարածվում 30 ՄՎտ հզորությամբ կայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա ունեցող անձանց, ինչպես նաև մինչև 30 ՄՎտ գումարային հզորությամբ մեկից ավելի կայաններում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիաներ ունեցող անձանց վրա:
- Լիցենզիա ունեցող անձը գրավոր ծանուցում է ՀՀ կառավարությանը՝ համապատասխան գործարք իրականացնելու մտադրության մասին: Կառավարությունը նշված գրավոր ծանուցումն ստանալուց հետո եռամսյա ժամկետում կարող է օգտվել կամ հրաժարվել նախապատվության իրավունքի իրացման հնարավորությունից:

«Գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրական, հողաշինարարական, չափագրական և հաշվառման գործունեության որակավորման վկայականների գործողության կասեցման, կասեցման հիմքերի վերացման և վկայականի գործողության դադարեցման, այդ թվում՝ Կոմիտեի նախաձեռնությամբ, կարգը և ժամկետները սահմանելու մասին» (N1097-Ն, ընդունված՝ 07.08.2025թ., ուժի մեջ՝ 09.08.2025թ.)

- Կարգավորման է ենթարկվում գեոդեզիական և մարկշեյդերական, քարտեզագրական, հողաշինարարական, չափագրական և հաշվառման գործունեության որակավորման վկայական ունեցող անձանց որակավորման վկայականների գործողության կասեցման և վկայականի գործողության դադարեցման ընթացակարգը:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի N 963-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» (N1092-Ն, ընդունված՝ 07.08.2025թ., ուժի մեջ՝ 17.08.2025թ.)

- Որոշման ընդունման նպատակն է ՀՀ օդային փոխադրողներին օդանավ շահագործողի վկայականի տրամադրման գործընթացը լիարժեքորեն համապատասխանեցնել միջազգային պայմանագրերին, այդ թվում՝ Չիկագոյի կոնվենցիայի դրույթներին, ԻԿԱՕ-ի կողմից հրապարակած ստանդարտներին և առաջարկվող գործելաձևերին:
- Որոշման ընդունմամբ ակնկալվում է դրական ազդեցություն ունենալ գործարար միջավայրի վրա՝ ապահովելով վկայականի տրամադրման գործընթացի հստակությունն ու մատչելիությունը օդանավ շահագործողների համար:

«Հայաստանի Հանրապետությունում գրանցված և օտարերկրյա օդանավ շահագործողների կողմից դեպի Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս մեկանգամյա, կանոնավոր և երկու և ավելի ոչ կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություններ տրամադրելու կարգը սահմանելու մասին» (N1081-Ն, ընդունված՝ 07.08.2025թ., ուժի մեջ՝ 08.08.2025թ.)

- Որոշման ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է նույնաբնույթ իրավական հարաբերությունները մեկ իրավական ակտով կարգավորելու, ինչպես նաև թռիչքների իրականացման թույլտվությունների տրամադրման ողջ գործընթացը ավիացիայի ոլորտի թվային ծառայությունների (aviation.e-gov.am) հարթակի միջոցով (էլեկտրոնային տարբերակով) իրականացնելու անհրաժեշտությամբ:
- Կարգավորվում են ՀՀ-ում գրանցված օդանավ շահագործողների (հայտատու) և օտարերկրյա օդանավ շահագործողների (օտարերկրյա հայտատու) կողմից դեպի ՀՀ տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվությունների տրամադրման հետ կապված հարաբերությունները:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մայիսի 25-ի N 804-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» (N1095-Ն, ընդունված՝ 07.08.2025թ., ուժի մեջ՝ 09.08.2025թ.)

- Որոշմամբ բարձրացվում է հաշտարարության առաջին ժամի համար նախատեսված վարձատրության դրույքաչափը՝ 10,000 դրամից 25,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն, հաշվի առնելով, որ հենց այդ փուլն է առավել ծախսատար, ներառում է գործի ուսումնասիրություն, ծանուցումների իրականացում, որոշ դեպքերում՝ հաշտարարության ավարտի վերաբերյալ փաստաթղթերի կազմում և այլն: Առաջին ժամին հաջորդող յուրաքանչյուր 30 րոպեի ժամավճարի՝ գործող 5,000 ՀՀ դրամ դրույքաչափը փոփոխել 10,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն դրույքաչափով: Առաջարկվող չափերը որոշվել են հաշվի առնելով ավելացված հարկային բեռը, ինչպես նաև մասնագիտական հանրային կողմից բարձրացված մտահոգությունները գործող դրույքաչափի ցածր լինելու վերաբերյալ:
- Հստակեցվում է նաև, որ սահմանված դրույքաչափը ներառում է ԱԱՀ-ն՝ հետագա մեկնաբանման խնդիրներից խուսափելու նպատակով:

«Խաղային գործունեության կարգավորման օպերատորի ընտրության մրցույթի անցկացման ընթացակարգը, օպերատորի ընտրության ընթացակարգին կոնսորցիումով մասնակցության կարգը, օպերատորի հետ պայմանագրի կնքման կարգը և մրցույթը չկայացած համարվելու հիմքերը սահմանելու մասին» (N1149-Ն, ընդունված՝ 14.08.2025թ., ուժի մեջ՝ 16.08.2025թ.)

- Որոշման անհրաժեշտությունը բխում է խաղային ոլորտի արդյունավետ կարգավորման, վերահսկողության ուժեղացման և միջազգային փորձի ներդրման նպատակներից:
- Որոշման ընդունմամբ լուծվում են մի շարք կարևոր խնդիրներ՝
 1. ապահովվում է օպերատորի ընտրության գործընթացի օրինականությունն ու թափանցիկությունը, մասնավորապես՝ օպերատորը պետք է ընտրվի բաց մրցույթի արդյունքում, որը երկփուլ մրցույթ է և իրականացվում է որակավորման հարցման և առաջարկի հարցման փուլերով,
 2. սահմանվում են որակավորման և առաջարկների գնահատման հստակ չափանիշներ,
 3. ներդրվում է փոխկապակցված անձանց մասնակցության բացառման և կոնսորցիումի ձևով մասնակցության մեխանիզմ,
 4. նախատեսվում է նաև մրցույթը չկայացած համարելու հստակ դեպքեր, ինչի արդյունքում հնարավոր է կանխել մրցույթի արհեստական ձգձգումները,
 5. սահմանվում է նաև հաղթող հայտատուի հետ պայմանագրի կնքման կարգը:

«Հանրության շրջանում առողջ ապրելակերպի խրախուսման և երթևեկության այլընտրանքային ձևերի խթանման միջոցառման իրականացման կարգը հաստատելու մասին» (N1115-Լ, ընդունված՝ 14.08.2025թ., ուժի մեջ՝ 01.09.2025թ.)

- Որոշմամբ նախատեսվում է.
 1. հաստատել հանրության շրջանում առողջ ապրելակերպի խրախուսման և երթևեկության այլընտրանքային ձևերի խթանման միջոցառման շահառուներին ներկայացվող պահանջները,
 2. միջոցառման շրջանակներում վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ընթացակարգը,
 3. միջոցառման շրջանակներում տրամադրվող աջակցության դադարեցման հիմքերը և աջակցության դադարեցման պահի դրությամբ արդեն ցուցաբերված աջակցության գումարի տնօրինման կարգը,
 4. առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ներկայացվող հաշվետվություններին վերաբերող պահանջները:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 26-ի N 355-Լ որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» (N1099-Լ, ընդունված՝ 07.08.2025թ., ուժի մեջ՝ 09.08.2025թ.)

- Որոշմամբ հաստատվել է տեքստիլ ոլորտի կազմակերպությունների համար մատակարարման շղթաների դիվերսիֆիկացիայի ապահովմանն ուղղված պետական աջակցության նպատակային միջոցառումը, որի շահառու է համարվում ՀՀ-ում գրանցված այն առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը, որը ունի բարվոք հարկային կարգապահություն, որի շրջանառության առնվազն 80 %-ը ձևավորվել է՝ ՏԳՏԴ ՇԼՅ «Մանածագործական արտադրատեսակների արտադրություն» և ՇԼԿ «Հագուստի արտադրություն» դասակարգիչներով սահմանված տնտեսական գործունեության տեսակներից, դիմում ներկայացման օրվան նախորդող 365 օրերի ընթացքում ՀՀ-ից «Արտահանում» մաքսային ընթացակարգով արտահանել է վերոնշյալ գործունեության տեսակներից հայկական ծագման ապրանք:
- Աջակցությունը տրամադրվում է տնտեսավարողներին՝ Զինաստանից, Հնդկաստանից, Իտալիայից, Ուզբեկստանից, Հարավային Կորեայից, Բանգլադեշից, Թուրքմենստանից, Տաջիկստանից և Իրանի Իսլամական Հանրապետությունից հումքի ներկրման նպատակով ՀՀ տարածքում գործող և լիցենզավորված բանկերից կամ վարկային կազմակերպություններից ստացվող վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման (սուբսիդավորման չափը՝ 8% դրամով և 6% արտարժույթով) ձևով:

«ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի N 1676-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» (N1102-Ն, ընդունված՝ 14.08.2025թ., ուժի մեջ՝ 15.08.2025թ.)

- Նախատեսվում է, որ Միասնական սոցիալական ծառայությունը վարձու աշխատողին, անհատ ձեռնարկատիրոջը և նոտարին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ժամանակավոր անաշխատունակության, մայրության նպաստ նշանակելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում հարկային մարմինն է տրամադրում, մասնավորապես, գործատուների վարձու աշխատողներին վճարված նպաստների և դրանցից պահված և վճարված եկամտային հարկի չափի վերաբերյալ անհատական տվյալներ, որոնք մուտքագրվում են վարձու աշխատողի անհատական հաշիվ:
- Նախատեսվում է նպաստի համար անհրաժեշտ տեղեկատվության (այդ թվում՝ ՊԵԿ-ի բազայից) ինքնաշխատ փոխանակման միջոցով նպաստների նշանակման գործընթացը իրականացնել պետական մարմնի միջոցով: Որոշումը տարածվելու է այն դեպքերի վրա, երբ «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամանակավոր անաշխատունակության առաջին օրը 2025 թվականի սեպտեմբերի 1-ն է կամ դրանից հետո:

«ՀՀ կառավարության 2022 թվականի օգոստոսի 11-ի N1266-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (N 1139-Ն, ընդունված՝ 14.08.2025թ., ուժի մեջ՝ 16.08.2025թ.)

- Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի գործող ստուգաթերթի հարցաշարի որոշ հարցեր հղում են կատարում արդեն փոփոխված իրավական ակտերի դրույթներին, մասնավորապես՝ «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ-134-Ն օրենքի 4-րդ հոդվածի 2.1-ին, 5-րդ հոդվածի 3.1-ին մասերով և 9-րդ հոդվածի 15.1-ին մասով սահմանված պահանջներին: Սույն որոշման հաստատումը նպաստում է սննդամթերքի անվտանգության վերաբերյալ սահմանած նոր պահանջների կատարման նկատմամբ պատշաճ վերահսկողություն իրականացմանը:
- Բացի այդ, հաշվի առնելով Կառավարության 2019թ. նոյեմբերի 14-ի N1570-Ն որոշմամբ սահմանված կարգավորումները, որի համաձայն՝ ստուգաթերթով արձանագրվող խախտումների միավորների հանրագումարը պետք է չգերազանցի 50 միավորը, անհրաժեշտ է վերանայել ստուգաթերթում ներառված հարցերի կշիռները:
- Նաև, ՀՀ կառավարության N1266-Ն որոշման՝ Իրացման կազմակերպությունների համար ստուգաթերթի «Սննդամթերքի փոխադրում. ընդունում, պահպանում և վաճառք» մասը լրացվել է մի շարք վերահսկողական բնույթի հարցերով:

«ՀՀ կառավարության 2019 թվականի հունիսի 6-ի N 730-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» (N1148-Ն, ընդունված՝ 14.08.2025թ., ուժի մեջ՝ 19.08.2025թ.)

- Ներկայում, Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի գործող ստուգաթերթի հարցաշարի որոշ հարցեր հղում են կատարում իրավական ակտերի դրույթներին, որոնք ենթարկվել են փոփոխության, մասնավորապես՝ «Թանկարժեք մետաղների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի նոր պահանջը: Որոշումը նպատակ է հետապնդում ստուգումների ընթացքն առավել արդյունավետ դարձնել՝ համապատասխան ստուգաթերթում ներառելով ծխախոտային արտադրանքի անվտանգության մասով սահմանված պահանջների վերաբերյալ հարցերը:
- Նախկինում, N 17-րդ հավելվածով հաստատված ստուգաթերթերում ամբողջական չէին այն հարցերը, որոնք վերաբերում են ծխախոտային արտադրանքի անվտանգության լաբորատոր փորձաքննությամբ պարզվող պահանջներին, որոնք նվազեցնում էին ոլորտում ռիսկի գնահատման և պատշաճ վերահսկողության իրականացման հնարավորությունը:
- Այդ առթիվ, վերախմբագրվել են Ծխախոտային արտադրանքի անվտանգության ստուգման վերաբերյալ (ՍՏԳ ԱԱ 2402 10 000 0, 2402 20 100 0, 2402 20 900 0, 2403 11 000 0, 2403 19 100 0, 2403 19 900 0, 2404 ծածկագրին կամ G 46.17, 46.21, 46.35, 46.39 և 46.90, G47.11, 47.26, 47.81 և 47.9 ՏԳՏ դասակարգչին համապատասխան) ստուգաթերթին վերաբերող դրույթները:

«ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1423-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (N 1124-Ն, ընդունված՝ 14.08.2025թ., ուժի մեջ՝ 15.08.2025թ.)

- Որոշման ընդունումը պայմանավորված է Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից վերահսկողության ոլորտում իրականացված ստուգումների ընթացքում ի հայտ եկած խնդիրների լուծման, ինչպես նաև «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքում կատարված փոփոխություններով, Հարկային օրենսգրքի 165-րդ հոդվածի դրույթներով, 2023 թվականի դեկտեմբերի 11-ին «Օգոնային շերտի պահպանության մասին» օրենքի 8.1-րդ հոդվածի լրացմամբ (որի համաձայն հոսակորուստների նկատմամբ վերահսկողությունը վերապահվել է Տեսչական մարմնին) սահմանած պահանջների նկատմամբ պատշաճ վերահսկողություն իրականացնելու անհրաժեշտությամբ:
- Մասնավորապես, փոփոխությունները վերաբերում են ստուգաթերթերին, որի «կշիռը» սյունակում վերաբաշխում է կատարվելու, որպեսզի գումարային միավորը հաշվարկվի 50 միավորի շրջանակներում:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 26-ի N 355-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (N1140-Լ, ընդունված՝ 14.08.2025թ., ուժի մեջ՝ 16.08.2025թ.)

- Ծրագիրը, որն սկսել է գործել 2022 թվականի օգոստոս ամսից, նպատակ է ունեցել արտաքին աշխատաշուկաներից բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավմամբ նպաստել Ընկերությունների արտադրողականության աճին: Ծրագրի շրջանակում փոխհատուցվում են տնտեսավարողների կողմից ներգրավված ԲՈՈՒՄ-երին հաշվարկված աշխատավարձերը և դրան հավասարեցված այլ վճարումները՝ համաձայն գործող սանդղակի:
- Փոփոխությամբ բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավման նպատակային ծրագրի շրջանակներում դիմում-հայտերի ընդունման համար նախատեսված ժամկետը փոփոխվել է՝ այն սահմանելով 2025 թվականի դեկտեմբերի 31-ի փոխարեն նույն թվականի օգոստոսի 15-ը, այսինքն՝ դիմում-հայտերի ընդունման վերջնաժամկետը կրճատվել է՝ պայմանավորված այն հանգամանքով, որ այն չի ծառայել ծրագրի հիմնական նպատակին՝ ՀՀ տարածքում գործող ընկերությունների արտադրողականության բարձրացմանը՝ ապահովելով տնտեսության ոլորտների հավասարաչափ բաշխվածություն:

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկության մասին» (N1113-Լ, ընդունված՝ 14.08.2025թ., ուժի մեջ՝ 15.08.2025թ.)

- Առաջարկի հիմնական նպատակը բուժաշխատողների նկատմամբ ոտնձգությունների կանխումն է, անվտանգության ապահովումը և գործող օրենսդրության բացի լրացումը:
- Առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգիրքը լրացնել բուժաշխատողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելու վերաբերյալ 187.1 հոդվածով, որի ուժով կնախատեսվի պատասխանատվություն՝ բուժաշխատողների օրինական գործունեությանը խոչընդոտելու համար:
- Արարքը կհամարվի ծանրացնող հանգամանքի առկայությամբ կատարված, երբ կատարվի բուժաշխատողի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով: Առաջարկի ներկայացման համար հիմք են ընդունվել միջազգային փորձը և բուժաշխատողների նկատմամբ բռնության շարունակական դեպքերը:

«Փաստահավաք հանձնաժողովի գործունեության կարգը սահմանելու մասին» (N 1143-Լ, ընդունված՝ 14.08.2025թ., ուժի մեջ՝ 16.08.2025թ.)

- Որոշմամբ կարգավորվում են փաստահավաք հանձնաժողովի աշխատանքների կազմակերպման և գործունեության իրականացման հետ կապված օրենքից բխող հարաբերությունները:
- Հանձնաժողովի հիմնական խնդիրն է ՀՀ-ում 1991 թվականի սեպտեմբերի 21-ից մինչև 2023 թվականը ներառյալ ժամանակահատվածի (այսուհետ՝ ուսումնասիրվող ժամանակահատված) իրադարձությունների և դեպքերի շրջանակում կամ դրանց հետևանքով տեղի ունեցած մարդու իրավունքների հիմնարար և պարբերական խախտումների բացահայտմանը, հնարավոր խախտումների կանխարգելմանը, կրկնության բացառմանը, հասարակության սոցիալական վերափոխմանը, սոցիալական արդարության վերականգնմանը, հաշտեցմանը, խախտումներից և իրադարձություններից տուժած կամ դրանց բացասական հետևանքները այլ կերպ կրած (կրող) անձանց իրավունքների ճանաչմանը, վերականգնմանը և պաշտպանությանը նպաստող գործունեության (այսուհետ՝ փաստահավաք գործունեություն) իրականացումը:
- Հստակեցվել են Փաստահավաք հանձնաժողովի կողմից Հանրային խորհրդի հաստատմանը եզրափակիչ զեկույց ներկայացնելու ժամկետը, լսումների և քննարկումների իրականացման ընթացակարգերը, Փաստահավաք հանձնաժողովի կողմից նիստերի միջոցով աշխատանքների կազմակերպման ընթացքը և որոշումներ ընդունելու կարգը, Փաստահավաք հանձնաժողովի անդամների իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև Փաստահավաք հանձնաժողովի գործունեության ապահովման միջոցները և գործավարության կարգը:

«Փաստահավաք հանձնաժողովում ընտրվելու նպատակով ոչ առևտրային կազմակերպությունների կողմից թեկնածուների ներկայացման կարգը, ներկայացվող փաստաթղթերի ցանկը, դրանց ներկայացման և ուսումնասիրման կարգը սահմանելու մասին» (N1128-Լ, ընդունված՝ 14.08.2025թ., ուժի մեջ՝ 15.08.2025թ.)

- Որոշմամբ կարգավորվում են Փաստահավաք հանձնաժողովում ընտրվելու նպատակով կազմակերպությունների կողմից թեկնածուների ներկայացման հետ կապված հարաբերությունները:
- Որոշմամբ սահմանվում են նաև թեկնածուի անձին ներկայացվող պահանջները և ներկայացվող փաստաթղթերի ցանկը:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի N 1119-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» (N 1136-Ն, ընդունված՝ 14.08.2025թ., ուժի մեջ՝ 24.08.2025թ.)

- «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Օրենքում 12.05.2025թ. ՀՕ-104-Ն օրենքով սահմանվել են ավագ ենթասպայական կազմի՝ բանակի (զլխավոր շտաբի) սերժանտի (9/9 խումբ), կորպուսի (վարչության) սերժանտի (9/8 խումբ), և կրտսեր ենթասպայական՝ շտաբի սերժանտի (7/4 խումբ) պաշտոնների վարձատրության գործակիցները:
- ՊՆ համակարգի զինծառայողների պայմանագրային զինվորական ծառայությունից արձակման դրամական օգնությունների չափերը սահմանված են ՀՀ կառավարության 25.09.2014թ. N 1119-Ն որոշմամբ, որի կապակցությամբ անհրաժեշտություն է առաջացել այդ պաշտոնները ներառել ավագ ենթասպայական և կրտսեր ենթասպայական կազմերի պայմանագրային զինծառայողների արձակման դրամական օգնությունների չափերում:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի N 712-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» (N 1146-Ն, ընդունված՝ 14.08.2025թ., ուժի մեջ՝ 25.08.2025թ.)

- Որոշման համաձայն՝ բանակի (զլխավոր շտաբի) սերժանտի, կորպուսի (վարչության) սերժանտի և շտաբի սերժանտի պաշտոնները ներառվում են ՀՀ զինված ուժերում ծառայության առանձնահատուկ պայմանների համար տրվող հավելումների հաշվարկման մեծությունների չափերում:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 166-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» (N 1141-Ն, ընդունված՝ 14.08.2025թ., ուժի մեջ՝ 25.08.2025թ.)

- Որոշման համաձայն բանակի (զլխավոր շտաբի) սերժանտի, կորպուսի (վարչության) սերժանտի և շտաբի սերժանտի պաշտոնները ներառվում են ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի ավագ ենթասպայական և կրտսեր ենթասպայական կազմերի՝ մարտական խնդիրների իրականացման, պլանավորման կամ վերահսկման գործառույթներ ունեցող կամ այդպիսի գործառույթներ չունեցող պաշտոններ զբաղեցնող զինծառայողների ատեստավորման արդյունքներով հաշվարկվող հավելավճարների չափերում:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի նոյեմբերի 26-ի N 1857-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» (N 1109-Ն, ընդունված՝ 14.08.2025թ., ուժի մեջ՝ 24.08.2025թ.)

- Որոշման համաձայն՝ բանակի (զլխավոր շտաբի) սերժանտի, կորպուսի (վարչության) սերժանտի և շտաբի սերժանտի պաշտոնները ներառվում են ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի զինվորական ծառայության պաշտոնների առանձին խմբերում ընդգրկվող հիմնական պաշտոնների անվանացանկում:

«Բարձր կատարողականի արդյունքով ուսումնական հաստատություններին խրախուսելու, ինչպես նաև ցածր կատարողականի արդյունքով աջակցելու նպատակով լրացուցիչ ֆինանսավորում տրամադրելու կարգը սահմանելու մասին» (N 1150-Ն, ընդունված՝ 14.08.2025թ., ուժի մեջ՝ 01.01.2026թ.)

- Սահմանվում է ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություններին բարձր կատարողականի արդյունքով խրախուսելու, ինչպես նաև ցածր կատարողականի արդյունքով աջակցելու նպատակով լրացուցիչ ֆինանսավորում տրամադրելու ընթացակարգը:
- Ի տարբերություն նախորդ կարգի, որտեղ հաստատության բարձր կատարողականի արդյունքը որոշվում էր՝ հիմք ընդունելով հաստատության սեփական գործունեության վերլուծությունը, այժմ արդյունքը որոշվում է հաստատության գործունեության բարձր կատարողականի արդյունավետության գնահատման չափանիշներով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից կազմակերպված մրցույթին ներկայացված բոլոր հաստատությունների նորարարական ծրագրերի արդյունքների վերլուծության հիման վրա: Բարձր կատարողականի արդյունք ունեցող հաստատությունները մշակում են նորարարական, իսկ ցածր կատարողականի արդյունք ունեցողները՝ բարելավման ծրագրեր:

«Մթնոլորտային օդի որակի գնահատման չափանիշների, աղտոտվածության չափման մեթոդների և ստանդարտացված չափման մեթոդների, ինչպես նաև աղտոտվածության չափման կայանների տեղադիրքերի եվ քանակների միասնական չափանիշների վերաբերյալ կարգը հաստատելու մասին» (N 1142-Ն, ընդունված՝ 14.08.2025թ., ուժի մեջ՝ 01.01.2030թ.)

- Սույն որոշմամբ նախատեսվում է մթնոլորտային օդի որակի գնահատման չափանիշները, աղտոտվածության չափման մեթոդները, աղտոտվածության չափման կայանների տեղադիրքը համապատասխանեցնել միջազգային չափանիշներին, ԵՄ երկրներում կիրառելի չափանիշներին՝ նպատակային արժեք սահմանելով ԱՀԿ-ի կողմից առաջարկվող ամենախիստ չափանիշները:
- Նախատեսվում է ունենալ միջազգային չափանիշներին համապատասխան մթնոլորտային օդի որակի գնահատման նոր չափանիշներ, մասնավորապես.
 1. նախատեսվում է ՀՀ օդի որակի չափանիշները համապատասխանեցնել 2024/2881/ԵՄ հրահանգով սահմանված ցուցանիշներին և ԱՀԿ-ի կողմից առաջարկվող ցուցանիշների 4-րդ փուլին 2030 թվականի հունվարի 1-ից,
 2. սահմանվել են վնասակար նյութերի սահմանային և նպատակային արժեքներ, սահմանային արժեքների թույլատրելի գերազանցումների ցուցանիշներ՝ կարևորելով մարդու առողջության վրա վնասակար նյութերի ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ ազդեցությունները,
 3. սահմանվել են օդի որակի գնահատման ցուցանիշները՝ հիքում ունենալով նաև ցուցանիշների գերազանցման դեպքում բուսականության կամ բնական էկոհամակարգի վրա ունեցած ազդեցությունը,
 4. սահմանվել են մթնոլորտային օդն աղտոտող վնասակար նյութերի համար զգուշացման և տեղեկացման շեմերը, դրանց գերազանցման դեպքերում ձեռնարկվելիք գործողությունները,
 5. սահմանվել են նաև մթնոլորտային օդի աղտոտվածության չափման մեթոդները և ստանդարտացված չափման մեթոդները, չափման կայանների տեղադիրքերի և քանակների միասնական չափանիշները՝ համապատասխանեցնելով միջազգային չափանիշներին:

«Գոտիների և ագլոմերացիաների դասակարգման մասին» (N 1145-Ն, ընդունված՝ 14.08.2025թ., ուժի մեջ՝ 01.01.2026թ.)

- Մթնոլորտային օդի մոնիթորինգի և կառավարման արդյունավետ միջոցառումների իրականացումն անհնար է առանց տարածքների հստակ դասակարգման: Գոտիների և ագլոմերացիաների դասակարգման համար հիմք են հանդիսացել բնակչության խտությունը, աշխարհագրական և տեղագրական բնութագրերը, կլիմայական պայմանները, օդի աղտոտման հիմնական աղբյուրները (արդյունաբերական տարածքներ, երթևեկության գոտիներ, քաղաքային և գյուղական շրջաններ), մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի տվյալների և օդի որակի ստանդարտների արձանագրված գերազանցումների պատմական շարքը, վարչատարածքային կառուցվածքը: Նախատեսվում է՝
 1. հանրապետության տարածքը բաժանել 1 ագլոմերացիայի (Երևան քաղաք) և 5 գոտիների (մարզեր),
 2. սահմանել յուրաքանչյուր գոտու կամ ագլոմերացիայի համար հիմնական աղտոտվածության ցուցանիշները,
 3. սահմանել յուրաքանչյուր գոտում կամ ագլոմերացիայում մոնիթորինգի իրականացման եղանակը, դիտակայանների քանակն ու տեսակը:

«ՀՀ կառավարության 2024 թվականի մայիսի 2-ի N 615-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» (N 1117-Ն, ընդունված՝ 14.08.2025թ., ուժի մեջ՝ 15.08.2025թ.)

- Փոփոխությունները վերաբերում են էկոպարեկային ծառայողի կողմից զենք կրելու կարգավորումներին:
- Ներկայիս կարգավորումներով էկոպարեկային ծառայողը պարտավոր է ծառայության իրականացման ընթացքում զենքը մշտապես կրել:
- Զենքը պահելու և կրելու հետ կապված հնարավոր ռիսկերը նվազեցնելու համար նախատեսվում է ամրագրել ծառայության իրականացման ընթացքում զենքը տրանսպորտային միջոցում կահավորված արկղում պահելու հնարավորություն այն դեպքում, երբ ծառայության իրականացման ընթացքում զենքը ամրացված չէ ծառայողի համազգեստին: Զենքը արկղից կհանվի օրենքով նախատեսված դեպքերում:

«ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 2070-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» (N 1147-Լ, ընդունված՝ 14.08.2025թ., ուժի մեջ՝ 16.08.2025թ.)

- ՀՀ կառավարության կողմից 2023 թվականի նոյեմբերի 30-ին ընդունվել է «Մշակող արդյունաբերության ոլորտում աշխատողների ներգրավման միջոցառումը հաստատելու մասին» որոշումը, որի համաձայն՝ տնտեսվարողներին փոխհատուցում է տրամադրվում շահառուի և աշխատողի միջև աշխատանքային հարաբերությունների առաջին տասներկու ամիսների համար աշխատողների մասով հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների նկատմամբ հաշվարկված եկամտային հարկի չափով: Միջոցառման շրջանակներում վճարումների ընթացքը ապահովելու նպատակով առաջացել է ՊԵԿ-ի և Էկոնոմիկայի նախարարության միջև փաստաթղթերի կրկնակի և միաժամանակյա ներկայացման պահանջ, որը ստեղծում է ավելորդ վարչարարական բեռ:
- Հաշվի առնելով վերոգրյալը՝ որոշմամբ սահմանվում է, որ ՊԵԿ-ի էլեկտրոնային հաշվետվությունների ներկայացման համակարգով ներկայացվող N 3 ձևով սահմանված դիմումը և վճարման հանձնարարականը համարվում են ՀՀ Էկոնոմիկայի նախարարության և շահառուի միջև կնքված պայմանագիր և հանդիսանում են բավարար իրավական հիմք՝ Գանձապետարանի ստորաբաժանմանը ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերի ներկայացման պահանջը իրականացնելու նպատակով: Բացի այդ, նախատեսվում է հետադարձ ուժ տալ և առաջարկվող փոփոխությունները և լրացումները տարածել 2025 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա՝ հնարավորություն տալով արդեն իսկ շահառու համարված տնտեսվարող սուբյեկտներին առանց կրկնակի վարչարարության ստանալ համապատասխան աջակցության գումարները:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 15-ի N 1080-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին (N 1226-Ն, ընդունված՝ 28.08.2025թ., ուժի մեջ՝ 08.09.2025թ.)

- Սահմանվում է փոխհատուցվող դեղ ստանալու իրավունք ունեցող պացիենտներին փոխհատուցվող դեղերը, դեղի առաջին նշանակման դեպքում, դուրս գրել մեկ ամսվա համար, այնուհետև պացիենտի գանձատների բացակայության դեպքում՝ երեք ամսվա համար նախատեսված քանակներով:

- Միաժամանակ փոխհատուցվող դեղատոմսի ուժի մեջ լինելու ժամկետը առաջարկվում է երկարաձգել:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» (N 1133-Ն, ընդունված՝ 14.08.2025թ., ուժի մեջ՝ 15.08.2025թ.)

- «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման ընդունումը պայմանավորված է «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի և «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ: Որոշումը միտված է կանոնակարգելու հասարակական կազմակերպությունների՝ հողամասերի կառուցապատման իրավունքի տրամադրման գործընթացը:
- Մասնավորապես, նախատեսվում է բարեգործական, հասարակական կազմակերպություններին և հիմնադրամներին կառուցապատման իրավունք տրամադրել առանց մրցութային կարգի պահպանման այն դեպքում, երբ կառուցապատումը կատարվում է կանոնադրությամբ նախատեսված (այդ թվում՝ ձեռնարկատիրական) գործունեություն իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հավանության արժանացած ծրագրի հիման վրա, նախկին՝ ձեռնարկատիրության հետ չկապված գործունեություն իրականացնելու համար նախատեսված բացառության փոխարեն:

«ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» (N 1110-Ն, ընդունված՝ 14.08.2025թ., ուժի մեջ՝ 15.08.2025թ.)

- Որոշումը մշակվել է ՄԱԿ-ի կոնվենցիայի կողմերի համաժողովների կազմակերպման շրջանակում ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման ընթացակարգերի կազմակերպման պայմանների ճկունության ապահովման անհրաժեշտությունից ելնելով:
- Որոշման ընդունման արդյունքում հնարավորություն է ստեղծվել համաժողովների կազմակերպման շրջանակում ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների ձեռքբերումն իրականացնելու մեկ անձից գնման ձևով՝ հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայության հիմքով:

ՀՀ կառավարության «Առանց փորձաքննության պեստիցիդների և ագրոքիմիկատների ներմուծման դեպքերը սահմանելու մասին» (N 1153-Ն, ընդունված՝ 21.08.2025թ., ուժի մեջ՝ 22.08.2025թ.)

- Որոշմամբ առաջարկվում է սահմանել պեստիցիդների և ագրոքիմիկատների՝ ՀՀ ներմուծման այն դեպքերը, երբ փորձաքննություն անցկացնելը պարտադիր չէ: Դրանք վերաբերում են արտահանող երկրում խիստ վերահսկողության ու միջազգային չափանիշներին համապատասխան փորձարկված արտադրանքին, ինչպես նաև օրգանական պարարտանյութերին, ֆերոմոններին, բույսերի աճի խթանիչներին, կենսաբանական և բուսական ծագման պեստիցիդներին, որոնց փորձաքննության համար ՀՀ-ում բացակայում են հավատարմագրված լաբորատորիաներ: Այսպիսով, կկանխվեն ներմուծման անհարկի ձգձգումները և կբացառվի կրկնակի փորձարկման անհրաժեշտությունը:

ՀՀ կառավարության «Գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրական, հողաշինարարական, չափագրական և հաշվառման աշխատանքների իրականացմանը ներկայացվող պարտադիր պահանջները սահմանելու մասին» (N 1188-Ն, ընդունված՝ 21.08.2025թ., ուժի մեջ՝ 23.08.2025թ.)

- Որոշումը մշակվել է «Գեոդեզիական և քարտեզագրական գործունեության մասին» օրենքում 12.07.2024թ. կատարված փոփոխությունների կիրառման նպատակով: Այն սահմանում է գեոդեզիական, մարկշեյդերական, քարտեզագրական, հողաշինարարական, չափագրական և հաշվառման աշխատանքներ իրականացնող որակավորված մասնագետների համար պարտադիր պահանջները՝ նրանց իրավունքներն ու պարտականությունները:
- Որոշման ընդունմամբ կբարձրանա ոլորտում իրականացվող աշխատանքների որակը և կապահովվի ոլորտի զարգացումը:

««Էներգետիկայի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկության մասին» (N 1160-Լ, ընդունված՝ 21.08.2025թ., ուժի մեջ՝ 22.08.2025թ.)

- Առաջարկվում է ներդնել նոր հասկացություն՝ միկրոէներգաարտադրող, որը հանդիսանում է մինչև 150 կՎտ դրվածքային հզորությամբ կայանում, իսկ մինչև 2022 թվականի մայիսի 1-ը՝ 150 կՎտ-ից մինչև 500 կՎտ դրվածքային հզորությամբ ինքնավար էներգաարտադրող կայանում էլեկտրական էներգիա արտադրող անձ:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 19-ի N 2037-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» (N 1180-Ն, ընդունված՝ 21.08.2025թ., ուժի մեջ՝ 22.08.2025թ.)

- Որոշմամբ նախատեսվում է, որ պետական սեփականություն հանդիսացող բնակելի տարածքների բնակիչները, ովքեր համապատասխանում են N 2037-Ն որոշման պահանջներին, կարող են իրենց զբաղեցրած տարածքները ստանալ նվիրատվությամբ: N 2037-Ն որոշման պահանջներին համապատասխանող են համարվում այն բնակիչները, ովքեր՝
 1. համապատասխան տարածքում հաշվառված և վերջին երեք տարում փաստացի բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ՝ որոշ բացառություններով,
 2. սույն կարգի համաձայն նվիրատվությամբ բնակելի տարածքներ նախկինում ձեռք բերած անձինք, որոնց նվիրատվությունից հետո բնակության նույն հասցեում սահմանված կարգով որպես բարելավում հատկացված է տարածք, եթե առնվազն վերջին երեք տարիների ընթացքում հաշվառված և փաստացի բնակվել են համապատասխան տարածքում,
 3. 1988-1992 թվականներին Ադրբեյջանի Հանրապետությունից բռնագաղթած և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած համապատասխան տարածքում հաշվառված և վերջին երեք տարուց ավելի փաստացի բնակվող անձինք՝ որոշ բացառություններով:
- Որոշման ընդունմամբ ամբողջությամբ կկանոնակարգվի պետական բնակելի տարածքների նվիրատվության գործընթացը, կբարելավվեն բնակության վայրի խնդիր ունեցող անձանց կենսապայմանները, և կբարձրանա պետական գույքի օգտագործման արդյունավետությունը:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի N 1192-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» (N 1154-Ն, ընդունված՝ 21.08.2025թ., ուժի մեջ՝ 22.08.2025թ.)

- Որոշումը նպատակ ունի բացառելու նույնաբովանդակ իրավական ակտերի առկայությունը: Քանի որ 2015 թ. հոկտեմբերի 15-ի N 1192-Ն որոշմամբ արդեն սահմանված է պեստիցիդների և ագրոքիմիկատների ներմուծման փորձաքննության կարգը, ապա առանց փորձաքննության ներմուծվող արտադրատեսակների վերաբերյալ բացառությունները նպատակահարմար է ամրագրել առանձին որոշմամբ: Այդ պատճառով որոշման հավելվածից հանվել են համապատասխան դրույթները:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 4-ի N 659-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» (N 1161-Ն, ընդունված՝ 21.08.2025թ., ուժի մեջ՝ 22.08.2025թ.)

- 2021 թվականի մայիսի 5-ին ընդունվել են «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՕ-194-Ն և «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» ՀՕ-195-Ն օրենքները: Վերոնշյալ օրենքներով սահմանվել են նոր հասկացություններ: Մասնավորապես՝ կիրառվում է հաշմանդամություն ունեցող, ֆունկցիոնալության խորը, ծանր և միջին աստիճանի սահմանափակում ունեցող անձ և այլ սահմանումներ:
- Որոշմամբ փոփոխված հասկացությունները ներառվել են նաև «Հաշմանդամ մանուկների ու պատանիների անընդմեջ վերականգնման համակարգում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պարապմունքների կազմակերպման, մեթոդաբանական ու բժշկական աջակցության կարգը սահմանելու մասին» N 659-Ն որոշման մեջ:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հուլիսի 4-ի N 1043-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» (N 1170-Ն, ընդունված՝ 21.08.2025թ., ուժի մեջ՝ 22.08.2025թ.)

- «ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում 2024 թվականի մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրևներով պայմանավորված հեղեղումների պատճառով առաջացած արտակարգ իրավիճակի հետևանքով աղետի գոտում ֆիզիկական անձանց պատճառված վնասի փոխհատուցման կարգը հաստատելու մասին» N 1043-Ն որոշմամբ սահմանված է, որ բազմաբնակարան շենքի բնակարանի կամ անհատական բնակելի տան կորստի դեպքում ֆիզիկական անձին տրամադրվում է փոխհատուցում՝ բնակարանի գնման վկայագրի միջոցով բնակարան (բնակելի տուն) ձեռք բերելու նպատակով՝ հիմք ընդունելով կորցրած բնակարանի կամ բնակելի տան ընդհանուր մակերեսը և ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից հրապարակված՝ 2024 թվականի հունիս ամսվա ընթացքում մարզերի համապատասխան քաղաքներում վաճառված բազմաբնակարան շենքերի բնակարանների 1 քմ-ի ձևավորված շուկայական միջինացված գնի տվյալները:
- Այժմ գործող իրավակարգավորումներով՝ 148.050 ՀՀ դրամի չափով փոխհատուցում տրամադրելու դեպքում հնարավոր չէ Ալավերդի քաղաքում ձեռք բերել քաղաքացիների բնակարաններին համարժեք բնակարաններ: Առաջարկվում է 1 քմ տարածքի համար փոխհատուցման նվազագույն շեմ սահմանել 180.000 ՀՀ դրամը:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի նոյեմբերի 14-ի N 1570-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» (N 1207-Ն, ընդունված՝ 28.08.2025թ., ուժի մեջ՝ 29.08.2025թ.)

- Որոշման ընդունումը պայմանավորված է Կառավարության 14.11.2019թ. N1570-Ն որոշմամբ հաստատված՝ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը բարելավելու անհրաժեշտությամբ: Առաջարկվող փոփոխությամբ նախատեսվում է, մասնավորապես, սահմանել.
 1. ըստ առանձին տնտեսական գործունեության ուղղությունների սահմանել ոլորտային ռիսկի նոր միավորներ: Ոլորտային ռիսկը դասակարգելիս հիմք են ընդունվել Տեսչական մարմնի ստուգումների արդյունքները, տարիների ընթացքում դրանց փոփոխման միտումը, ինչպես նաև պետական վերահսկողական առաջնահերթությունները,
 2. ստուգաթերթով գնահատվող ռիսկայնության միավորի նոր մեթոդ՝ բացառելով ռիսկայնության բարձր խմբում մեծամասամբ արդեն իսկ ստուգված տնտեսավարող սուբյեկտների կենտրոնացումը,
 3. գործունեության վերլուծության արդյունքում ձևավորված ռիսկի գնահատման լրացուցիչ մեթոդներ,
 4. տվյալների բազայում տնտեսավարողներին ընդգրկելու սկզբունքները և դրանից նրանց հանելու դեպքերը:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 10-ի N 618-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» (N 1202-Ն, ընդունված՝ 28.08.2025թ., ուժի մեջ՝ 07.09.2025թ.)

- Կառավարության 10.06.2015թ. N618-Ն որոշմամբ սահմանված են ազատ տնտեսական գոտու կարգավիճակ չունեցող արդյունաբերական գոտու ստեղծման հայտը ներկայացնելու և հաստատելու, ինչպես նաև ազատ տնտեսական գոտու կարգավիճակ չունեցող արդյունաբերական գոտու կազմակերպման կարգերը:
- Փոփոխությամբ հստակեցվում են ազատ տնտեսական գոտու կարգավիճակ չունեցող արդյունաբերական գոտու ստեղծման նախագծի վերաբերյալ Կառավարության որոշման ընդունման հիմքերը:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հուլիսի 6-ի N 772-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» (N 1201-Ն, ընդունված՝ 28.08.2025թ., ուժի մեջ՝ 29.08.2025թ., բացառությամբ որոշման հավելվածի 3-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում 01.09.2025թ.)

- Հարկային օրենսգրքում 04.12.2024թ. ՀՕ-499-Ն օրենքով կատարված փոփոխություններով՝
- 1. օրենսգրքի 39-րդ (ԱԱՀ-ի մասով աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման վայրի որոշման կանոններ) և 64-րդ (ԱԱՀ-ից ազատված գործարքներն ու գործառնությունները) հոդվածներում վերանայվել են գիտահետազոտական աշխատանքներին առնչվող ձևակերպումները՝ սահմանելով միասնական ձևակերպում «գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքներ»,
- 2. խմբագրվել է օրենսգրքի 121-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված՝ գիտահետազոտական և (կամ) փորձակոնստրուկտորական աշխատանքների ու ծառայությունների վրա կատարվող ծախսերի նվազեցման (այդ թվում՝ աշխատանքները որպես այդպիսին որակելու) կարգավորումը, նախատեսելով, որ գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքների վրա կատարվող ծախսերը դրանց կատարման տարում նվազեցնելու համար աշխատանքներն որպես այդպիսին որակելու չափանիշները կսահմանվեն կառավարության որոշմամբ (մինչ այդ սահմանված էին նույն մասով):

- Կառավարության 772-Ն որոշմամբ սահմանված էին այն չափանիշները, որոնց համապատասխանող գիտահետազոտական աշխատանքների կատարումը ազատվում էր ավելացված արժեքի հարկից: Հաշվի առնելով վերոնշյալ փոփոխությունները, դրանց կիրարկման նպատակով որոշումն ամբողջովին խմբագրվել է՝
- 1. սահմանվել են օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և 121-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված ԱԱՀ-ի և շահութահարկի մասով արտոնությունների կիրառության նպատակով գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների չափանիշները (դրանք հիմնականում նույն չափանիշներն են, որոնք սահմանված էին ԱԱՀ-ից ազատման արտոնության մասով),
- 2. սահմանվել են գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքներում չներառվող աշխատանքները:
- 3. գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքներում չներառվող վերոնշյալ աշխատանքներն ու ծառայությունները ԱԱՀ-ի կիրառության առումով որպես բացառություն որոշմամբ սահմանված չեն եղել (դրանք մինչև օրենսգրքում կատարված փոփոխությունը սահմանված էին միայն շահութահարկի մասով), ուստի ԱԱՀ-ի մասով արտոնության շրջանակի կրճատումը հետադարձ ուժով չկիրառելու նպատակով սահմանվել է, որ ԱԱՀ-ի արտոնության մասով որոշումն ուժի մեջ է մտնում 2025թ. սեպտեմբերի 1-ից:
- 4. սահմանվել է, որ օրենսգրքի 121-րդ հոդվածի 6-րդ մասի կիրառության իմաստով՝ գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների վրա կատարվող ծախսերը համախառն եկամտից նվազեցվում են, եթե գիտական հետազոտությունների կամ փորձարարական մշակումների համար վճարվող գումարներն առանձնացված են պատվիրատուի և կատարողի միջև կնքվող պայմանագրերում կամ պատվիրատուի և կատարողի միջև կազմվող՝ օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերով սահմանված հաշվարկային փաստաթղթերում: Նշված կարգավորումը նպատակ ունի կարգավորել այն խնդիրը, երբ հարկ վճարողը նույն հաշվարկային փաստաթղթով կստանա ծառայությունների ու աշխատանքների համախումբ, արդյունքում, հնարավոր է լինում աշխատանքների և ծառայությունների համախմբում հստակ տարբերակել գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների վրա կատարվող ծախսերը և դրանց արժեքը:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 8-ի N 1179-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» (N 1237-Ն, ընդունված՝ 28.08.2025թ., ուժի մեջ՝ 02.09.2025թ.)

- «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-73-Ն և «Պետական նպաստների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-74-Ն օրենքներով ներդրված ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստներ հաշվարկելու, նշանակելու և վճարելու նոր համակարգի շրջանակներում չաշխատող անձին մայրության նպաստի նշանակման համար այլևս դիմում ներկայացնելու անհրաժեշտություն չկա և նպաստ նշանակելու համար հիմք են ընդունվելու անձի՝ հղիության և ծննդաբերության վերաբերյալ էլեկտրոնային առողջապահության համակարգից ստացված տեղեկատվությունը (տվյալները):
- Վերոնշյալ փոփոխությունների կիրարկումն պահովելու նպատակով Կառավարության 08.10.2015թ. «Չաշխատող անձին մայրության նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» N 1179-Ն որոշման փոփոխություններով սահմանվել է հետևյալը.
 1. մայրության նպաստը նշանակվելու է ինքնաշխատ եղանակով՝ ժամանակավոր անաշխատունակության նպաստ և մայրության նպաստ հաշվարկելու, նշանակելու, վճարելու համար տեղեկատվական շտեմարանի միջոցով՝ հիմք ընդունելով էլեկտրոնային առողջապահության համակարգից ստացված՝ հղիության և ծննդաբերության վերաբերյալ տեղեկատվությունը (տվյալները),
 2. տեղեկատվական բազաներից ստացված տեղեկատվության հիման վրա մայրության նպաստ նշանակելը մերժելու հիմքերն են՝ մայրության նպաստի իրավունք չունենալը կամ որպես վարձու աշխատող ունենալը կամ ՀՀ բնակչության պետական ռեգիստրում չնույնականացվելը,
 3. նպաստ նշանակելու կամ նպաստ նշանակելը մերժելու վերաբերյալ ծանուցումները ուղարկելու ընթացակարգերը (www.e-social.am կայքէջի կամ azdarar.am կայքէջի միջոցով),
 4. նպաստը վճարվելու է էլ. առողջապահության համակարգում ժամանակավոր անաշխատունակության թերթիկում նշված բանկին փոխանցելու միջոցով,
 5. որոշման շրջանակներում ժամանակավոր անաշխատունակության նպաստ և մայրության նպաստ հաշվարկելու, նշանակելու, վճարելու համար տեղեկատվական շտեմարանի և ծառայության միջև փոխանակվող տեղեկատվության կազմը:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 287-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (N 1239-Ն, ընդունված՝ 28.08.2025թ., ուժի մեջ՝ 30.08.2025թ.)

- «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 27.03.2025թ. ՀՕ-73-Ն և «Պետական նպաստների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 27.03.2025թ. ՀՕ-74-Ն օրենքներով ներդրվել է ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստներ հաշվարկելու, նշանակելու և վճարելու նոր համակարգ:
- Նախկին կարգավորումներով վարձու աշխատողների ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստները նշանակում, հաշվարկում և վճարում էր գործատուն, մայրության նպաստն ամբողջությամբ, իսկ ժամանակավոր նպաստը մասնակիորեն փոխհատուցվում էր պետական բյուջեից: Ըստ նոր կարգավորումների՝ «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» օրենքով սահմանված տեղեկատվական բազայի (հարկային մարմնի բազա) և էլեկտրոնային առողջապահության համակարգի տվյալների հիման վրա Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայությունը հաշվարկելու, նշանակելու և վճարելու է նպաստը:
- Օրենդորական փոփոխությունների շրջանակներում Կառավարությանը վերապահված է սահմանել նաև մայրության նպաստը, ժամանակավոր անաշխատունակության նպաստի՝ պետական բյուջեից վճարման ենթակա գումարը բանկի միջոցով վճարելու կարգը: Կառավարության՝ 12.03.2020թ. «Լիազորած պետական մարմին ճանաչելու, միանվագ դրամական վճարների հաշվի պայմանագրի օրինակելի ձևը, միանվագ դրամական վճարների հաշիվ բացելու համար անհրաժեշտ տվյալների ցանկը և միանվագ դրամական վճարների հաշվին մուտքագրելու միջոցով վճարվող գումարները սահմանելու մասին» N 287-Ն որոշման մեջ կատարվող փոփոխություններով նախատեսվում է, որ միանվագ դրամական վճարների հաշվին մուտքագրելու միջոցով վճարվում են նաև մայրության նպաստի և ժամանակավոր անաշխատունակության նպաստի՝ պետական բյուջեից վճարման ենթակա գումարները (երկուսը միասին՝ նպաստ):

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 14-ի N 1024-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» (N 1241-Ն, ընդունված՝ 28.08.2025թ., ուժի մեջ՝ 30.08.2025թ.)

- «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 27.03.2025թ. ՀՕ-73-Ն և «Պետական նպաստների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 27.03.2025թ. ՀՕ-74-Ն օրենքներով ներդրված ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստներ հաշվարկելու, նշանակելու և վճարելու նոր համակարգի շրջանակներում առաջարկվում է Կառավարության 14.07.2011թ. «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N1024-Ն որոշումը շարադրել նոր խմբագրությամբ, առանձին հավելվածներով, համաձայն որոնց.
- օրենքով սահմանված լիազորած պետական մարմինը Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայությունն է (ինչպես ներկայումս),
- N1 հավելվածով հաստատվել է առողջարանային բուժման նպաստի իրավունք տվող հիվանդությունների ցանկը (նախկինում սահմանվածը թողնվել է անփոփոխ),
- N2 հավելվածով հաստատվել է նպաստ նշանակելու, հաշվարկելու և վճարելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը (տվյալները) լիազոր մարմնի կողմից վարվող տեղեկատվական համակարգի, էլեկտրոնային առողջապահության համակարգի և հարկային մարմնի կողմից վարվող տեղեկատվական բազայի միջև փոխանակելու կարգը: Տեղեկատվական համակարգերի միջև տեղեկատվությունը (տվյալները) փոխանակվում են ինքնաշխատ եղանակով՝ տվյալների շտեմարանների փոխգործելիության միջոցով՝ օրենքով սահմանված ժամկետներում: Նախատեսված է նաև նպաստ նշանակելու համար հիմք հանդիսացող տեղեկատվության (տվյալի) փոփոխություն հայտնաբերելու դեպքում այդ մասին հարկային մարմնի կողմից լիազոր մարմնին տեղեկացնելու կարգը,
- N3 հավելվածով հաստատվել է նպաստ նշանակելու, հաշվարկելու և վճարելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը (տվյալները) լիազոր մարմնի կողմից վարվող տեղեկատվական համակարգի, էլեկտրոնային առողջապահության համակարգի և հարկային մարմնի կողմից վարվող տեղեկատվական բազայի միջև փոխանակվող տեղեկատվության (տվյալների) կազմը:

- N3 հավելվածով սահմանված են այն տվյալները, որոնց փոխանակմամբ հնարավոր է ապահովել ինքնաշխատ եղանակով նպաստի հաշվարկումը և նշանակումը: Տվյալները խմբավորված են ըստ գործընթացին մասնակից տեղեկատվական համակարգերի և գործընթացի փուլերի,
- N4 հավելվածով հաստատվել է օտարերկրյա պետության բժշկական հաստատության տված անձի ժամանակավոր անաշխատունակության վերաբերյալ տեղեկատվությունը (տվյալները) էլեկտրոնային առողջապահության համակարգ ներառելու կարգը,
- N5 հավելվածով հաստատվել է ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների հաշվարկման, նշանակման և վճարման կարգը: Օրենքի 24-րդ հոդվածին համապատասխան՝ սահմանվել է մայրության նպաստը, ժամանակավոր անաշխատունակության նպաստի՝ պետական բյուջեից վճարման ենթակա գումարը բանկի միջոցով վճարելու կարգը: Նպաստը վճարվում է բացառապես անկանխիկ եղանակով՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 928.8-րդ հոդվածով սահմանված միանվագ դրամական վճարների հաշվի պայմանագիր կնքած բանկում վարձու աշխատողի անվամբ բացված՝ միանվագ դրամական վճարների հաշիվ չհանդիսացող այլ դրամային հաշվին (բացառությամբ ավանդային և վարկային հաշիվների) փոխանցելու միջոցով, իսկ նման հաշվի բացակայության դեպքում՝ անձի անվամբ միանվագ դրամական վճարների հաշին փոխանցելու միջոցով (անձի անվամբ բացում է բանկը): Նպաստի վճարումը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 928.8-րդ հոդվածով սահմանված միանվագ դրամական վճարների հաշվի պայմանագիր կնքած բանկի միջոցով իրականանցնելը նպատակ ունի ապահովել նպաստի վճարումն այն դեպքում, երբ բուժառու ընտրում է բանկ, սակայն պարզվում է այդ բանկում նա չունի միանվագ հաշիվ չհանդիսացող այլ բանկային հաշիվ, ինչը նշանակում է, որ նպաստը միանվագ դրամական վճարների հաշվով կվճարվի միայն այն դեպքում, երբ միանվագ դրամական վճարների հաշվի պայմանագիր կնքած բանկում նա չի ունենա բանկային այլ հաշիվ,
- N6 հավելվածով հաստատվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվության կամ դատական ակտի հիման վրա կամ անձի մահվան դեպքերում ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների հաշվարկման, նշանակման և վճարման կարգը: ռայության, քրեակատարողական ծառայության, հակակոռուպցիոն կոմիտեի (այսուհետ՝ համապատասխան մարմիններ),

- N7 հավելվածով հաստատվել է վերահաշվարկված նպաստի ավել վճարված գումարը գործատուի կողմից պետական բյուջե վերականգնելու կարգը: Օրենքով սահմանված կարգավորումներին համապատասխան նախատեսվել է, որ ավել վճարված նպաստի գումարը գործատուն պետական բյուջե է վերականգնում՝ հարկային մարմնի միջոցով ծանուցվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում: Այդ ժամկետում չվերականգնելու դեպքում՝ ծառայությունը գործատուին ծանուցում է՝ հաղորդագրություն ուղարկելով գործատուի էլեկտրոնային փոստի հասցեին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև հետադարձ կապի բջջային հեռախոսահամարին կամ փոստային առաքմամբ և տեղեկացնում է նրա կամ նրա անունից հանդես գալու իրավասություն ունեցող անձի՝ ծառայության ցանկացած տարածքային կենտրոն ներկայանալու և այդ գումարը պետական բյուջե վերականգնելու ժամանակացույց կնքելու անհրաժեշտության մասին: Ժամանակացույցի հիման վրա գործատուն ավել վճարված նպաստի գումարը պետական բյուջե է վերականգնում 3 ամսվա ընթացքում: Ավել վճարված նպաստի գումարը գործատուի կողմից պետական բյուջե է բռնագանձվում դատական կարգով՝ ծառայության ներկայացրած հայտի հիման վրա
- N8 հավելվածով հաստատվել է լիազոր մարմնի կողմից վարվող տեղեկատվական շտեմարան ներառվող տվյալների կազմը: Սահմանված են բոլոր այն տվյալները, որոնք պետք է ներառվեն ծառայության կողմից վարվող տեղեկատվական շտեմարան:
- Բացի վերոնշյալը, ««Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 27.03.2025 ՀՕ-73-Ն օրենքի 11-րդ հոդվածը և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 29.04.2025 N 1-2025 պաշտոնական պարզաբանումը, նախագծի անցումային դրույթներով նախատեսվել է, որ որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է այն դեպքերի վրա, երբ ժամանակավոր անաշխատունակության առաջին օրը 2025 թվականի սեպտեմբերի 1-ն է կամ դրանից հետո: Այն դեպքում, երբ ժամանակավոր անաշխատունակության առաջին օրը մինչև 2025 թվականի սեպտեմբերի 1-ն է, իրավահարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 14-ի «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 1024-Ն որոշման՝ մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏՈՎ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՑԱԾ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐ

«Կիբեռանվտանգության մասին», «Հանրային տեղեկությունների մասին», «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքների, ինչպես նաև հարակից օրենքների նախագծերի փաթեթին հավանություն տալու մասին (N 1131-Ա, ընդունված՝ 14.08.2025թ. ուժի մեջ՝ 15.08.2025թ.)

- Նախագծերի փաթեթի նպատակը թվային ենթակառուցվածքների և կիբեռանվտանգության կարգավորումն է:
- «Կիբեռանվտանգության մասին» օրենքի նախագծի համաձայն՝ ծառայություն մատուցողը պարտավոր է ունենալ կիբեռանվտանգության ապահովման ներքին կանոնակարգ և ձեռնարկել անընդհատ ռեժիմով մշտադիտարկում, ծանուցել ինքնավար մարմնին էական ազդեցություն ունեցող կիբեռմիջադեպի մասին 24 ժամվա ընթացքում, ներկայացնել թարմացված տեղեկատվություն 72 ժամվա ընթացքում և վերջնական հաշվետվություն՝ 1 ամսվա ընթացքում, տեղեկացնել կիբեռմիջադեպի հետևանքով հնարավոր ազդեցության ենթարկված անձանց, անցնել կիբեռանվտանգության աուդիտ առնվազն երեք տարին մեկ անգամ, ապահովել անձնակազմի ուսուցումը և կիբեռհիգիենան:
- «Հանրային տեղեկությունների մասին» օրենքի նախագծի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է ապահովել տեղեկություններին հասանելիություն թվային ձևաչափով, որը հնարավորություն կտա անմիջապես բացահայտել, նույնականացնել և վերծանել կոնկրետ տվյալներ, տեղեկատվությունը հավաքել, պահել և մշակել պատշաճ ձևով (ոչ թե ad hoc), տվյալների կատալոգը ստեղծել և կառավարել ստանդարտացված ձևով, հանրային տեղեկատվությունը հասանելի դարձնել, օգտագործել ամպային տիրույթներ՝ տվյալների պահպանման և հոսթինգի համար՝ անվտանգության և վերահսկման կանոնների պահպանմամբ, ապահովել վերահսկողություն և հսկողություն:
- «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագիծը կարգավորում է Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի՝ մասնավորապես Տեղեկատվական համակարգերի կարգավորման հանձնաժողովի (այսուհետ՝ «Հանձնաժողով») ստեղծման և գործունեության գործընթացը, դրա կարգավիճակը, անդամներին ներկայացվող պահանջները, անկախության երաշխիքները, ինչպես նաև իրավասության և լիազորությունների շրջանակը:

- Հանձնաժողովն ունենալու է ինքնավար կառույցի կարգավիճակ, որը պատասխանատու է տեղեկատվական համակարգերի և կիբեռանվտանգության ոլորտում իր իրավասության շրջանակում գործառնությունների իրականացման համար՝ ներառյալ անվտանգության միջոցների զարգացման կազմակերպումը և դրանց կիրառման համակարգումը: Հանձնաժողովը կազմակերպում է ազգային նույնականացման շերտի մշակումը, կառավարումը, զարգացումը, հոսթինգը և օգտագործումը՝ ներառյալ անձանց էլեկտրոնային նույնականացումը, թվային ստորագրությունները, կողմնորման ծրագրային ապահովումը, տեղեկատվության մուտքի հարթակը (hartak.am) և «Ես եմ» նույնականացման հարթակը:

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջև ծառայությունների առևտրի և ներդրումների մասին» համաձայնագրի ստորագրման առաջարկությանը հավանություն տալու մասին (N 1075-Ա, ընդունված՝ 07.08.2025թ., ուժի մեջ՝ 08.08.2025թ.)

- Համաձայնագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության և Արաբական Միացյալ Էմիրությունների միջև ծառայությունների առևտրի և ներդրումների իրականացման գործընթացների ազատականացումը: Համաձայնագիրը ներառում է ծառայություններին առնչվող հավելվածներ, որոնք կողմերը համաձայնեցրել են բանակցությունների ընթացքում և որոնց հիման վրա առաջարկվել են արտոնություններ:
- Մասնավորապես, Հայաստանի կողմից էմիրաթական կողմի համար նախատեսվել են արտոնություններ գյուղատնտեսության, անտառտնտեսության, առողջապահության, կրթության, բնապահպանության և փոստի ոլորտներում, իսկ Էմիրաթների կողմից՝ համակարգչային, գիտատեխնիկական խորհրդատվության, սարքավորումների վերանորոգման, քարտեզագրման, հեռախոսակապի ոլորտներում, ինչպես նաև նախատեսվել են որոշ պարզեցումներ իրավաբանական, շինարարական, հաշվապահական և աուդիտի ոլորտներում ծառայությունների մատուցման մասով:

«Թափոնների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերին հավանություն տալու մասին» (N 1073-Ա, ընդունված՝ 07.08.2025թ., ուժի մեջ՝ 08.08.2025թ.)

- Նախագծի ընդունմամբ ակնկալվում է, որ կկանխվի աղբավայրերի ապօրինի շահագործումը, աղբավայրը տնօրինողներն առավել հետևողական կլինեն աղբավայրերի հարակից տարածքների պատշաճ պահպանման, աղբավայրի վնասակար ազդեցության մշտադիտարկման իրականացման և լիազոր մարմիններին մշտադիտարկման տվյալների ներկայացման հարցում, ինչպես նաև մշտադիտարկման արդյունքում ստացված տվյալների հիման վրա իրականացվող միջոցառումների շնորհիվ կնվազեցվի շրջակա միջավայրի վրա աղբավայրի վնասակար ազդեցությունը: Մասնավորապես, նախատեսվում է՝
- 1. հստակեցնել դեպքերը, երբ թափոնների հեռացման վայրերում մշտադիտարկում իրականացնելու պարտավորությունների կատարման պատասխանատու կհանդիսանան թափոնների հեռացման վայրերը շահագործողները, իսկ դրանց բացակայության դեպքում՝ տվյալ վայրը, օբյեկտը տնօրինողները,
- 2. օրենքով ամրագրել վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորմանը վերաբերող կարգավորումները,
- 3. օրենքում որոշ լրացումների կատարմամբ հստակեցնել թափոնների հաշվառման, վտանգավոր թափոնների անձնագրավորման, վիճակագրական հաշվետվությունների ներկայացման, ինչպես նաև թափոնների հեռացման վայրերում մշտադիտարկման և ուսումնասիրությունների իրականացման գործընթացները,
- 4. լրացում կատարել ՎԻՎՕ 43.2-րդ հոդվածում՝ աղբավայրի մշտադիտարկման իրականացման կարգը խախտելու համար պատասխանատվության միջոց սահմանելով նաև աղբավայրը տնօրինողների նկատմամբ:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ ՀՀ կառավարության առաջարկության մասին» (N 1208-Լ, ընդունված՝ 28.08.2025թ., ուժի մեջ՝ 29.08.2025թ.)

- Կառավարությունն առաջարկում է, բացի դրոշմանիշերի և դրոշմապիտակների օտարման համար տուգանքից, նախատեսել պատասխանատվություն նաև հսկիչ նշանների օտարման համար:

- Հաշվի առնելով «ալկոհոլային խմիչք» և «ալկոհոլային (սպիրտ)» հասկացությունների տարբերությունը՝ առաջարկվում է ՎԻՎՕ-ում ամբողջությամբ անցնել «ալկոհոլային խմիչք» հասկացությանը, որպեսզի ապահովվի իրավական հստակությունը:
- Նախագծով ծխախոտի և ալկոհոլային խմիչքների դեպքում նախատեսվում են շատ ավելի բարձր տուգանքներ, քան այլ ապրանքների համար: Կառավարությունն այս մասով առաջարկում է տալ ավելի ծանրակշիռ հիմնավորումներ:

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու մասին (N 1125-Ա, ընդունված՝ 21.08.2025թ., ուժի մեջ՝ 22.08.2025թ.)

- Հարկային օրենսգրքի 123-րդ հոդվածի կարգավորումները թույլ են տալիս գրադարաններին, թանգարաններին, հանրակրթական դպրոցներին, տուն-գիշերօթիկներին, ծերանոցներին, մանկատներին, բժշկական հաստատություններին, ինչպես նաև ոչ առևտրային կազմակերպություններին տրամադրված ակտիվների, դրանց համար կատարված աշխատանքների և (կամ) դրանց մատուցված ծառայությունների արժեքը, բայց ոչ ավելի, քան հարկային տարվա համախառն եկամտի 0.25 տոկոսը նվազեցնել շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով:
- Նախագծով առաջարկվում է հնարավորություն տալ շահութահարկով հարկման բազան նվազեցնել Հայաստանի Հանրապետությունում իրականացվող տարրական, հիմնական, միջնակարգ, նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական կամ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման լիցենզիա ունեցող՝ պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին և պետության կամ համայնքի կողմից ստեղծված հիմնադրամներին կամ «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքի համաձայն ստեղծված հիմնադրամին տրամադրված ակտիվների, դրանց համար կատարված աշխատանքների և (կամ) դրանց մատուցված ծառայությունների արժեքի չափով, բայց ոչ ավելի, քան հարկային տարվա համախառն եկամտի 2.5 տոկոսը:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծին և հարակից նախագծի փաթեթին հավանություն տալու մասին» (N 1167-Ա, ընդունված՝ 21.08.2025թ., ուժի մեջ՝ 22.08.2025թ.)

- Նախագծով առաջարկվում է Քաղաքացիական օրենսգրքի 263-րդ և 299-րդ հոդվածներում նախատեսել, որ բանկի կամ վարկային կազմակերպության մասնակցությամբ կնքվող կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունքի և հիփոթեքի խառը պայմանագրերը կարող են կնքվել Կադաստրի էլեկտրոնային հարթակում, եթե դրանց բոլոր պայմանները շարադրված են Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած նոտարական վավերացում չպահանջող պայմանագրերի օրինակելի ձևերին համապատասխան:
- Այս պայմանագրերից ծագող իրավունքների պետական գրանցման դիմումները կկատարվեն միայն Կադաստրի կայքում հաշվառված բանկերի և վարկային կազմակերպությունների միջոցով:
- Ակնկալվում է, որ փոփոխությունները կհեշտացնեն հիփոթեքային բազմակողմ պայմանագրերի կնքումը, հնարավորություն կտան դրանք ստորագրել աշխարհի ցանկացած վայրից, կնվազեցնեն ժամանակի և գործընթացների ծախսերը, իսկ քաղաքացիներին կապահովեն ընտրություն՝ պայմանագիրը կնքել նոտարական վավերացմամբ կամ առանց դրա՝ էլեկտրոնային եղանակով:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծին հավանություն տալու մասին (N 1159-Ա, ընդունված՝ 21.08.2025թ., ուժի մեջ՝ 22.08.2025թ.)

- Փոփոխությունների նպատակն է ապահովել գույքային իրավունքների գրանցման գործընթացի կանխատեսելիությունն ու արդյունավետությունը, ինչպես նաև խթանել քաղաքացիների և տնտեսվարողների իրավունքների պաշտպանությունը:
- Նախագծով նախատեսվում է ներդնել թվային գործիքակազմ՝ իրավունքների ինքնաշխատ գրանցման ինստիտուտ, որը կթույլատրի պայմանագրերի էլեկտրոնային ստորագրում «Ես եմ» նույնականացմամբ, այդ թվում՝ Հայաստանից դուրս գտնվող անձանց կողմից՝ առանց հավելյալ գործընթացների:
- Պայմանագրերի էլեկտրոնային հաստատման և դրանցից բխող իրավունքների գրանցման կարգավորումները կգործեն պիլոտային կարգով մեկուկես տարի, իսկ գործնականում բնականոն կիրառման ենթակա լինելու դեպքում կդառնան մշտական:

«Կլիմայի մասին» օրենքի նախագծի և հարակից նախագծերի փաթեթի վերաբերյալ» օրենքների նախագծերին հավանություն տալու մասին (N 1168-Ա, ընդունված՝ 21.08.2025թ., ուժի մեջ՝ 22.08.2025թ.)

- Նախագծով առաջարկվում է սահմանել կլիմայական քաղաքականության շրջանակը, կլիմայական քաղաքականության մշակման և իրականացման ոլորտում պետական, տարածքային կառավարումը և տեղական ինքնակառավարումը, կլիմայի փոփոխության հարցերով խորհրդի կարգավիճակը, կլիմայական ֆինանսավորման մեխանիզմները, կլիմայական քաղաքականության կարգավորիչ գործիքները, չափումները, հաշվետվողականությունը և հավաստագրումը, կլիմայական քաղաքականության իրականացման շրջանակներում միջազգային համագործակցությունը, կլիմայական տեղեկատվության հրապարակայնությունը և մատչելիությունը, կլիմայական գիտությունների ոլորտում կրթությունը և գիտությունը, ինչպես նաև պատասխանատվությունը կլիմայական օրենսդրությունը խախտելու համար:
- Օրենքի ընդունմամբ ակնկալվում է միջազգային հանձնառությունների պատշաճ սպասարկում, իրավասությունների և պարտականությունների հստակեցում, նորարարական ֆինանսավորման մեխանիզմների ներդրում, արտանետումների և արդյունքների հաշվառման ինստիտուցիոնալ համակարգի ստեղծում:

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Զինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության միջև ուղևորների և բեռների միջազգային ճանապարհային փոխադրումների մասին» համաձայնագրի ստորագրման առաջարկությանը հավանություն տալու մասին» (N 1206-Ա, ընդունված՝ 28.08.2025թ., ուժի մեջ՝ 29.08.2025թ.)

- Համաձայնագիրը հնարավորություն կտա կարգավորելու երկու երկրների միջև ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների իրականացման գործընթացը և կնպաստի երկու երկրների միջև փոխշահավետ տնտեսական և գործարար կապերի խթանմանը, ավտոմոբիլային տրանսպորտով միջպետական փոխադրումների ոլորտի զարգացմանը, միջազգային տրանսպորտային միջանցքների շրջանակներում համագործակցության ընդլայնմանը:

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծին հավանություն տալու մասին (N 1164-Ա, ընդունված՝ 21.08.2025թ., ուժի մեջ՝ 22.08.2025թ.)

- Նախագծով առաջարկվում է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքում սահմանել հարկաբյուջետային հատուկ ռիսկերի նյութականացման, գնահատման և կառավարման, դրանց վերաբերյալ տեղեկատվության հրապարակայնությունն ապահովող դրույթներ: Մասնավորապես, նախատեսվում է.
- 1. Օրենքում սահմանել, որ պայմանական պարտավորություններ առաջացնող պայմանագրերը և դրանցում կատարվող փոփոխությունները ենթակա են նախնական գնահատման լիազորված մարմնի կողմից, ինչպես նաև հստակեցնել, որ պայմանական պարտավորություններ առաջացնող պայմանագրերը և դրանցում կատարվող փոփոխությունները նույնպես ենթակա են պարտադիր գրանցման պետական լիազորված մարմնում:
- 2. Միջնաժամկետ ծախսերի ծրագրի հարկաբյուջետային քաղաքականությունը և Կառավարության բյուջետային ուղերձը շարադրող դրույթներում ավելացնել հարկաբյուջետային հատուկ ռիսկերին առնչվող տեղեկատվությունները:
- 3. Օրենքում ավելացնել հարկաբյուջետային հատուկ ռիսկերի գնահատման նպատակով պետական մարմինների կողմից տեղեկատվության հավաքագրման ընթացակարգը սահմանող դրույթ:
- 4. Օրենքի պետական բյուջեի և համայնքների բյուջեների եկամուտների աղբյուրները սահմանող հոդվածներում ներառել «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենքով սահմանված ՊՄԳ պայմանագրերի շրջանակներում մասնավոր գործընկերոջ կողմից հանրային գործընկերոջը վճարվող փոխհատուցումները, տույժերն ու տուգանքները և այլ վճարները:
- Նախագծի ընդունման արդյունքում կստեղծվի իրավական գործիքակազմ հարկաբյուջետային հատուկ ռիսկերի մասով, դրանց վերաբերյալ տեղեկատվության ներկայացման իրավական պահանջներ և հիմքեր:

«Պետական պարտքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի և հարակից նախագծերի փաթեթին հավանություն տալու մասին» (N 1155-Ա, ընդունված՝ 21.08.2025թ., ուժի մեջ՝ 22.08.2025թ.)

- Նախագծերով առաջարկվում են մի շարք փոփոխություններ և նոր կարգավորումներ պետական պարտքի և հանրային հատվածի պարտքի ոլորտում: Վերանայվում են «պետական պարտք», «հանրային հատվածի պարտք» հասկացությունները:
- Նախագծով լիազոր մարմնին վերապահվում է պետական արտարժույթային պարտատոմսերի թողարկման լիազորություն: Լիազոր մարմնին նաև տրվում է իրավասություն՝ վարկային պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո կատարել դրանով նախատեսված փոփոխություններ, ինչպես նաև լիազոր մարմնին տրվում է իրավասություն՝ վարկային պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո կատարել դրանով նախատեսված փոփոխություններ:
- Պետական երաշխիքների հետ կապված դրույթները տեղափոխվում են «Բյուջետային համակարգի մասին» օրենք:
- Նախատեսվում են պետական պարտքի չափի սահմանափակումների մասին դրույթներ, օրինակ՝ եթե կառավարության պարտքը գերազանցում է ՀՆԱ-ի 60%-ը, արգելվում է նոր պայմանական պարտավորությունների և բյուջետային երաշխիքների ստանձնումը, եթե դրանք չեն ներառվել բյուջեում:
- Ընդհանուր առմամբ, նախագծերը նպատակ ունեն հստակեցնել պարտքային քաղաքականությունը, բարձրացնել կառավարման թափանցիկությունն ու վերահսկելիությունը և ներդնել նոր սահմանափակումներ պարտքի կայունության ապահովման համար:

E-DRAFT Հարթակում հանրային քննարկման դրված նախագծեր

««Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծեր (հասանելի հետևյալ հղումով).

- ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մշակված նախագծի նպատակն է հեղինակային և հարակից իրավունքները կարգավորող օրենսդրության համապատասխանեցումը միջազգային պրակտիկայում կիրառվող մոտեցումներին:
- Նախագծով նախատեսվում են հեղինակային իրավունքի սահմանափակումներ, որոնք նպատակաուղղված են հանրության շրջանում ստեղծագործությունների էլ ավելի լայն հասանելիության ապահովմանը: Դրանք հնարավորություն կտան կրթական հաստատություններին, գրադարաններին ու արխիվներին ոչ առևտրային հիմունքներով ստեղծագործություններ մատակարարել միմյանց՝ իրենց ընթերցողներին տրամադրելու, ինչպես նաև ստեղծագործությունների օրինակներն ուսանողներին ներքին ապահով ցանցով տրամադրելու համար:
- Բացի այդ, մտավոր սեփականության ոլորտում պետական լիազոր մարմնի կողմից գույքային իրավունքները կոլեկտիվ հիմունքներով կառավարվող կազմակերպությունները կանցնեն հավատարմագրման գործընթաց:
- Կոլեկտիվ կառավարում իրականացնող կազմակերպություններին անդամակցող իրավատերերին կվերապահվեն վերահսկողության իրավունքներ: Մասնավորապես, նրանք իրավունք կունենան ստուգելու տարեկան հաշվետվությունները, ծանոթանալու իրենց հասանելիք հոնորարների հաշվարկման-բաշխման փաստաթղթերին, հրավիրելու անկախ աուդիտ: Կազմակերպության գործունեության վերահսկողության իրավունք է վերապահվել նաև պետական լիազոր մարմնին:
- Վերանայվելու են նաև մալուխային վերահաղորդումների և տեսալսողական կատարումների ամրագրումների արտադրության և օգտագործման հետ կապված կարգավորումները:

««ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-397-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին» (հասանելի հետևյալ հղումով) և «ՀՀ կառավարության 2022 թվականի հունվարի 5-ի N 14-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (հասանելի հետևյալ հղումով).

- ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից շրջանառության մեջ է դրվել ինքնակամ կառույցների վերաբերյալ նոր կարգավորումներ, որոնք թույլ կտան քաղաքացիներին, ովքեր չեն հասցրել մինչև նախորդ սահմանված ժամկետի ավարտը հաշվառել իրենց ինքնակամ կառույցները, իրականացնել հաշվառում մինչև 2026 թվականի սեպտեմբերի 1-ը:
- Այս կարգավորումը քաղաքացիներին կտրամադրի լրացուցիչ ժամանակ՝ 2021 թվականի օրթոֆոտոհատակագծերում, (օրթոֆոտոլուսանկարներում) արտացոլված ինքնակամ կառույցների (այդ թվում՝ կիսակառույց հատվածների) վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունների և փաստաթղթերի հաշվառումն իրականացնելու համար:

«ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 13-ի N1467-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ (հասանելի հետևյալ հղումով).

- ՀՀ հարկային օրենսգրքի 122-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գույքի բնական կորուստը համախառն եկամտից նվազեցվում է Կառավարության սահմանած չափը չգերազանցող չափով՝ այդ կորուստի տեղի ունենալու կամ այդ կորուստը հայտնաբերելու հարկային տարվա ընթացքում:
- Խնդիրն այն է, որ շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցվող պտուղների և բանջարեղենների որոշ տեսակների (արքայախնձորի, նարինջի, մանդարինի, կիտրոնի, թուրինջի, կիվիի և այլն) պահպանման ժամանակ առաջացող բնական կորուստների չափեր սահմանված չեն:
- Նախագծով առաջարկվում է սահմանել շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցվող պտուղների և բանջարեղենների որոշ տեսակների պահպանման ժամանակ առաջացող բնական կորուստների չափերը:

«Բնակելի կառուցապատման գործունեության մասին» օրենքի հայեցակարգի նախագիծ (հասանելի հետևյալ հղումով).

- Կառուցապատման ոլորտում առաջացող խնդիրները (օրինակ՝ կառուցապատողների սնանկացումը և շենքերի կառուցապատման անավարտ մնալը) և միջազգային լավագույն փորձը հաշվի առնելով՝ հայեցակարգով առաջարկվում է տարբերակել բնակելի կառուցապատողներին, որոնց համար անհրաժեշտ է սահմանել հստակ չափանիշներ և միայն այդ չափանիշներին բավարարող բնակելի կառուցապատողներին տալ հնարավորություն իրականացնել դեռևս կառուցման փուլում գտնվող անշարժ գույքի վաճառք՝ դրանով զսպելով ոլորտում առկա ռիսկերը:

«ՀՀ կառավարության 2024 թվականի հունվարի 11-ի թիվ 53-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ (հասանելի հետևյալ հղումով).

- Նախագծով առաջարկվում է «Ըստ գերատեսչական պատկանելության պետական գաղտնիքի շարքին դասվող տեղեկությունների ցանկը հաստատելու մասին» թիվ 53-Ն որոշման Հավելվածի 37-րդ կետից հանել «ՀՀ կենտրոնական բանկի դրամական պահուստների վերաբերյալ տեղեկությունները՝ յուրաքանչյուր անվանական արժեքի համար, հայկական դրամի պատրաստման տեխնոլոգիայի և պաշտպանության առանձնակի հատկանիշների» բառերը:
- ՀՀ դրամանիշների թողարկման նպատակով մրցույթների կազմակերպման համար հայկական դրամի պատրաստման տեխնոլոգիայի և պաշտպանության առանձնակի հատկանիշների վերաբերյալ տեղեկատվությունը պետական գաղտնիքի շարքում չդասվելու դեպքում անհրաժեշտություն է առաջանում այդ ցանկից հանել նաև «ՀՀ կենտրոնական բանկի դրամական պահուստների վերաբերյալ տեղեկությունները՝ յուրաքանչյուր անվանական արժեքի համար»:

«ՀՀ հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ (հասանելի հետևյալ հղումով).

- ՀՀ ֆինանսների նախարարությունը առաջարկում է փոփոխություններ Հարկային օրենսգրքում՝ վերանայելով պետության կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում ստացվող նպատակային դրամական միջոցների հարկման կանոնները:

- Ներկայումս կատարված ծախսերի կամ վնասների փոխհատուցման տեսքով ստացված գումարները համարվում են եկամուտ ստացման տարրում, ինչը շահութահարկի բեռ է առաջացնում, հատկապես գյուղատնտեսության ոլորտում, որտեղ արտադրանքի իրացումից եկամուտները ազատված են հարկումից:
- Նախագիծը նախատեսում է, որ ակտիվների ձեռքբերման, կառուցման, ստեղծման կամ մշակման ծախսերի փոխհատուցման նպատակով ստացված գումարները եկամուտ համարվեն միայն այն տարրում, երբ ակտիվը ճանաչվում է ծախս կամ կորուստ:
- Միևնույն ժամանակ, նախագծով առաջարկվում է սահմանել, որ շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով շահութահարկ վճարողների համար եկամուտ չեն համարվում պետության կողմից ֆինանսավորվող՝ գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության ծրագրերի շրջանակներում ստացված՝ վարկերի (լիզինգի) և դրանց գծով հաշվարկվող տոկոսադրույքների սուբսիդավորման գումարները, իսկ ծախս չեն համարվում պետության կողմից ֆինանսավորվող՝ գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության ծրագրերի շրջանակներում ստացված՝ վարկերի (լիզինգի) տոկոսադրույքների սուբսիդավորման գումարները:

ՀՀ ֆինանսների նախարարի 2016 թվականի հունվարի 8-ի N-2-Ն հրամանում լրացումներ կատարելու մասին նախագիծ (հասանելի հետևյալ հղումով)

- ՀՀ ֆինանսների նախարարի հրամանի նախագծով նախատեսվում է կատարել լրացումներ 2016 թվականի հունվարի 8-ի թիվ 2-Ն հրամանում՝ հանրային հատվածի կազմակերպություններում ՏՏ ակտիվների արդյունավետ հաշվառման ու վերահսկողությունը ապահովելու նպատակով:
- Նախագիծը մշակվել է Հայաստանի տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդի 2024 թ. սեպտեմբերի 27-ի որոշման հիման վրա և նպատակ ունի.
 1. ներդնելու ՏՏ ակտիվների գույքագրման միասնական համակարգ,
 2. բարձրացնելու հաշվառման թափանցիկությունն ու վերահսկելիությունը,
 3. ապահովելու տեղեկատվական անվտանգության և ռազմավարական կառավարման արդի պահանջներին համապատասխանություն:
- Ակնկալվում է, որ նոր կարգավորումը կբարձրացնի ՏՏ ակտիվների կառավարման արդյունավետությունը հանրային հատվածում:

«Բանկերի վերակառուցման մասին օրենքի և մի շարք հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծեր (հասանելի հետևյալ հղումով)

- ՀՀ Կենտրոնական բանկի կողմից մշակվել է «Բանկերի վերակառուցման մասին» և մի շարք հարակից օրենքների փոփոխությունների փաթեթ, որը նախատեսում է ներդնել բանկերի վերակառուցման (bank resolution) ժամանակակից մեխանիզմներ: Փաթեթով.
 1. Ներդրվում է բանկերի վերակառուցման ինստիտուտը, և Բանկերի վերակառուցման բացառիկ իրավասությունը վերապահվում է ԿԲ-ին,
 2. Ներդրվում են միջազգային չափանիշներին համահունչ գործիքներ և դրանց կիրառման մեխանիզմներ՝ բանկի վաճառք, կամուրջ բանկ, ակտիվների առանձնացում, ներքին աջակցություն,
 3. Խնդրահարույց բանկերի կորուստները կլանելու և կապիտալը համալրելու նպատակով ներդրվում է Կենտրոնական բանկի կողմից կապիտալի գործիքների դուրսգրման և փոխարկման հնարավորությունն ու իրավասությունը,
 4. Ստեղծվում է Վերակառուցման հիմնադրամ, որը կձևավորվի բանկերի կատարած հատկացումների հաշվին (թիրախային մակարդակ՝ համակարգի պարտավորությունների առնվազն 0.5%, օրենքի ուժի մեջ մտնելուց հետո 10 տարվա կտրվածքով): Բանկերը կատարում են եռամսյակային պարբերական վճար նախորդ եռամսյակի վերջին օրվա դրությամբ տվյալ բանկի ակտիվների մինչև 0,1 տոկոսի չափով:
 5. Եթե բանկի վերակառուցման արդյունքում վերակառուցվող բանկի որևէ մասնակից կամ պարտատեր կրի ավելի մեծ վնաս, քան կկրեր վերակառուցվող բանկի՝ օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարման դեպքում, ապա վնասը փոխհատուցվում է օրենքի նախագծով սահմանված կարգով:
- Նախագիծը մշակվել է ԱՄՀ և Համաշխարհային բանկի առաջարկությունների հիման վրա:
- Ակնկալվում է, որ փոփոխությունները հնարավորություն կտան արդյունավետ կարգավորել ֆինանսական ճգնաժամերը:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» նախագիծ (հասանելի հետևյալ հղումով)

- Կադաստրի կոմիտեի գործունեության արդյունավետության բարձրացման և մատուցվող ծառայությունների որակի բարելավման նպատակով նախատեսվում է օպտիմալացնել սպասարկման գրասենյակների ցանցը և ստեղծել խորհրդատվական կենտրոններ՝ Երևանում և մի շարք մարզերում:

«Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացում կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծեր (հասանելի հետևյալ հղումով)

- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից առաջարկվող նախագծով նախատեսվում է, որ ՀՀ պետական սահմանի ավտոմոբիլային անցման կետերով ՀՀ-ից մեկնող բեռնատարների հոսքը կկարգավորվի հերթերի կառավարման համակարգի միջոցով:
- Առաջարկվում է պետականսահմանի ավտոմոբիլային անցման կետերի հարևանությամբ նախատեսել վճարովի կայանատեղիների կազմակերպման գործունեություն, որի շրջանակներում կգործի հերթերի կառավարման համապատասխան էլեկտրոնային համակարգ՝ բեռնատար տրանսպորտային միջոցների շարժի հաշվառման, հերթագրման, անցման կետ մուտք գործելու թույլտվության տրամադրմանն ուղղված՝ անհրաժեշտ տեղեկատվության փոխանակման նպատակներով:
- «Մաքսային կարգավորման մասին» օրենքում նախատեսվում է սահմանել՝
 1. տրանսպորտային միջոցների հերթագրման նպատակով կուտակային կայանատեղիների գործունեություն իրականացնող անձանց ներկայացվող պահանջները,
 2. կուտակային կայանատեղիների ստեղծման նպատակով՝ ավտոմոբիլայինանցման կետերից հեռավորությունը,
 3. կուտակային կայանատեղիների կազմակերպման գործունեություն իրականացնող անձանց կողմից մատուցվող ծառայությունները,
 4. բեռնատար տրանսպորտային միջոցներին ներկայացվող պահանջները,
 5. էլեկտրոնային եղանակով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և կուտակային կայանատեղիների կազմակերպման գործունեություն իրականացնող անձանց միջև փոխազդեցության նորմերը,
 6. ՀՀ պետական եկամուտների կոմիտեին և ՀՀ կառավարությանը վերապահված առանձին իրավասությունները:
- «Պետական տուրքի մասին» օրենքում նախատեսվում են հետևյալ դրույքաչափերը. կուտակային կայանատեղիների կազմակերպման գործունեություն կողմից մաքսային մարմինների հերթագրման համակարգի միջոցով Հայաստանի Հանրապետությունից մեկնող յուրաքանչյուր երեք հազար բեռնատարտրանսպորտային միջոցի հերթագրման ծառայության (մուտքի, կայանման, ելքի) համար 3.000.000 ՀՀ դրամ:

«Ներդրումային ֆոնդերի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (հասանելի հետևյալ հղումով)

- ՀՀ էկոնոմիկայի նախարարության և ՎԶԵԲ-ի Հայաստանի ներդրումային խորհրդի կողմից մշակված օրենսդրական նախագծով առաջարկվում է ոչ հրապարակային ներդրումային ֆոնդերի մասնակիցների առավելագույն թիվը բարձրացնել ներկայիս 49-ի փոխարեն մինչև 99:
- Փոփոխությունը նպատակ ունի ներդրումային ֆոնդերի գործունեությունը համապատասխանեցնել միջազգային փորձին, որտեղ ոչ հրապարակային ֆոնդերի հիմնական տարբերակիչ չափանիշը հանդիսանում է արժեթղթերի հրապարակային առաջարկի արգելքը, ոչ թե մասնակիցների քանակը:
- Նախագծի ընդունումը կնպաստի Հայաստանում ներդրումների ներգրավմանը և կբարձրացնի տնտեսավարողների կողմից կապիտալի ներգրավման հնարավորությունները՝ առանց պետական բյուջեի վրա լրացուցիչ ծախսերի:

«ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» նախագիծ (հասանելի հետևյալ հղումով)

- Նախագծով առաջարկվում է վարչական ակտի կասեցման որոշումը վերացնելու որոշման ուժի մեջ մտնելու 5-օրյա ժամկետը վերացնել:
- Ներկայումս Վարչական դատավարության օրենսգրքի կարգավորումների արդյունքում ստեղծվել է անհամաչափ իրավիճակ. վարչական ակտի կատարումը կասեցնելու միջանկյալ դատական ակտերը ուժի մեջ են մտնում անմիջապես, իսկ դրանց վերացման մասին որոշումները՝ միայն հնգօրյա ժամկետից հետո: Այս մոտեցումը հանգեցնում է գործարար միջավայրի, հատկապես՝ կառուցապատման ոլորտի համար լուրջ խնդիրների. շինարարության թույլտվության կասեցման վերացման դեպքում կառուցապատողները փաստացի գրկված են անմիջապես շարունակելու աշխատանքները, ինչը առաջացնում է լրացուցիչ ծախսեր, վնասներ և նվազեցնում ներդրումային միջավայրի հանդեպ վստահությունը:
- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարչական ակտի կատարումը կասեցնելու որոշումները անմիջապես ուժի մեջ մտնելու նպատակն է պաշտպանել հայցվորի շահերը, ապա նույն տրամաբանությամբ դրանց վերացման որոշումները պետք է անմիջապես ուժի մեջ մտնեն՝ պաշտպանելով վարչական ակտի հասցեատիրոջ շահերը: Հայցվորի և հասցեատիրոջ շահերի միջև անհամաչափության վերացումը անհրաժեշտ է ներդրումային միջավայրի կայունության ապահովման համար:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 2-ի N86-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (հասանելի հետևյալ հղումով)

- Նախագծով 28.02.2024թ. ՀՕ-106-Ն օրենքով կատարված փոփոխություններին համապատասխան՝ ՀՀ կառավարության 02.02.2017թ. N 86-Ն որոշման մեջ հստակեցվում են դրոշմանիշային վճարի հաշվարկման նպատակով հիմք ընդունվող համապատասխան հաշվարկների անվանումները:
- Միաժամանակ, նախագծով առաջարկվում է սահմանել, որ.
 1. դրոշմանիշային վճար վճարողի կողմից (ինչպես ինքնուրույն, այնպես էլ հարկային գործակալի միջոցով) հարկային մարմին ներկայացված ճշտված հաշվարկների հիման վրա առաջացած՝ դրոշմանիշային վճարի պարտավորություններից ավելի վճարված գումարները հատուցման հիմնադրամին փոխանցված լինելու դեպքում հարկային մարմինը, հատուցման հիմնադրամի հետ փոխհամաձայնեցված կարգով, ինքնաշխատ էլեկտրոնային եղանակով, նշված անձանց (այդ թվում՝ վերջիններիս հարկ վճարողի հաշվառման համարը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը) և դրոշմանիշային վճարի պարտավորություններից ավելի վճարված գումարների, ինչպես նաև հաշվարկների ճշտման արդյունքում հաշվարկված դրոշմանիշային վճարի գումարի չափի վերաբերյալ վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնում է հատուցման հիմնադրամին,
 2. հատուցման հիմնադրամը դրոշմանիշային վճարի պարտավորություններից ավելի վճարված գումարները համապատասխան գանձապետական հաշվեհամարին փոխանցելուց հետո փոխանցված գումարի վերաբերյալ տվյալը հարկային մարմնի հետ փոխհամաձայնեցված կարգով, ինքնաշխատ էլեկտրոնային եղանակով տրամադրում է հարկային մարմնին՝ դրոշմանիշային վճարի պարտավորություններից ավելի վճարված գումարները վերահաշվարկելու համար,
 3. եթե ֆիզիկական անձը հաշվետու տարվա եկամուտներից դրոշմանիշային վճարներ է վճարել ինչպես ինքնուրույն, այնպես էլ հարկային գործակալի միջոցով, և դրոշմանիշային վճարները վերադարձվել են մասնակի, ապա համարվում է, որ դիմումի հիման վրա սահմանված կարգով նախ վերադարձվել են ֆիզիկական անձի կողմից ինքնուրույն հաշվետու տարվա եկամուտներից հաշվարկված և վճարված դրոշմանիշային վճարները:

«Երկակի նշանակության ապրանքների արտահանման, Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի ընդունման և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հուլիսի 1-ի N 924-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունման մասին նախագիծ (հասանելի հետևյալ հղումով)։

- ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից շրջանառության մեջ դրված նախագծով առաջարկվում է փոփոխություններ կատարել՝ երկակի նշանակության ապրանքների, տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների արտահանման ու տարանցիկ փոխադրման թույլտվության տրամադրման գործընթացի ժամկետները կրճատելու նպատակով։
- Օրենքում փոփոխությունները հետևյալն են.
 1. հսկվող ապրանքների կամ ոչ նյութական արժեքների արտահանման թույլտվություն տալու կամ մերժելու որոշումը պետք է ընդունվի կառավարության կողմից սահմանված ժամկետում,
 2. շահագրգիռ պետական մարմինների բացասական կարծիքների դեպքում հարցը ներկայացվում է ՀՀ վարչապետին,
 3. այդ պարագայում որոշման կայացման ժամկետը կարող է երկարաձգվել կառավարության սահմանած կարգով։
- Հստակեցվում է նաև տարանցիկ փոխադրման ընթացակարգը, օրինակ՝ եթե փոխադրումը հակասում է ՀՀ միջազգային պարտավորություններին կամ վնասում է ազգային անվտանգությանը, լիազոր մարմինը սահմանված ժամկետում տեղեկացնում է տնտեսվարողին և մաքսային մարմինն ու արգելում փոխադրումը։

«Խաղային գործունեության կարգավորման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» և ««Պետություն-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծեր (հասանելի հետևյալ հղումով)։

- Նախագծերով առաջարկվել է սահմանել խաղային գործունեության կարգավորման օպերատորի ընտրության ընթացակարգի արդյունքների՝ դատական կարգով բողոքարկման մասին նորմ և դրա համար սահմանել հստակ ժամկետ՝ երկու ամիս, որը հոսում է բողոքարկվող որոշման կայացման կամ գործողության կատարման (անգործության ցուցաբերման) օրվանից։

- Միաժամանակ, առաջարկվել է ՊՄԳ ընթացակարգի արդյունքների՝ դատական կարգով բողոքարկման համար նույնպես սահմանել երկամսյա ժամկետ, որը ևս հոսում է բողոքարկվող որոշման կայացման կամ գործողության կատարման (անգործության ցուցաբերման) օրվանից։
- Միաժամանակ, նախագծերի անցումային դրույթներով սահմանվել է նաև, որ համապատասխան օրենքներն ուժի մեջ մտնելուց առաջ կատարված գործողությունները (դրսևորած անգործությունը) կամ կայացված որոշումները կարող են դատական կարգով բողոքարկվել օրենքն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող երկու ամսվա ընթացքում՝ ապահովելով դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրացման հնարավորությունը։

«ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» և ««Գնումների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծեր (հասանելի հետևյալ հղումով)։

- Նախագծով առաջարկվել է Քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ հայցի ապահովման վերաբերյալ կարգավորումներում ավելացնել այնպիսի դրույթ, որը կերաշխավորի, որ խաղային գործունեության կարգավորման օպերատորի ընտրության մրցույթի արդյունքների՝ դատական կարգով վիճարկումը չի կասեցնելու մրցույթի անցկացման ընթացակարգը կամ օպերատորի գործունեությունը։ Այլ կերպ ասած, եթե հարուցվի դատական գործ, ապա այդ գործի շրջանակներում չի կարող կիրառվել հայցի ապահովման այնպիսի միջոց, որը կհանգեցնի օպերատորի ընտրության ընթացակարգի կամ նրա գործունեության կասեցմանը։
- Միաժամանակ «Գնումների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությամբ հստակեցվում է, որ նշված օրենքի գործողությունը չի տարածվում խաղային գործունեության կարգավորման օպերատորի մրցույթի կամ դրա արդյունքում կնքված գործարքների վրա։
- Նախագծի ընդունմամբ ակնկալվում է սահմանել խաղային գործունեության կարգավորման օպերատորի ընտրության մրցույթի անցկացման պատշաճ երաշխիքներ, բացառել մրցույթի կասեցման հնարավորությունը։

«ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծեր (հասանելի հետևյալ հղումով):

- Առաջարկվում է ՀՀ հարկային օրենսգրքի (ՀՕ-165) 64-րդ հոդվածով սահմանված ավելացված արժեքի հարկի արտոնությունը երկարաձգել ևս երկու տարով՝ 2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը: Նախագծի ընդունմամբ նպաստավոր պայմաններ կստեղծվեն երկրում էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների ձեռքբերումն ու շահագործումը խթանելու, արդեն իսկ արձանագրված դրական արդյունքների շարունակականության ապահովման, մթնոլորտային օդի աղտոտվածության նվազեցման համար:
- Նախագծով առաջարկվում է ՀՀ հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածով սահմանված ավելացված արժեքի հարկի արտոնությունը երկարաձգել ևս երկու տարով՝ 2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը:
- 1.2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ՝ ԵՏՄ ԱՏԳԱԱ 8702 40 000, 8703 80 000 և 8711 60 ծածկագրերին դասվող և 2023թ-ի դեկտեմբերի 31-ից հետո թողարկված՝ էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների «Բացթողում» ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ձևակերպումը կամ ֆիզիկական անձանց կողմից որպես անձնական օգտագործման տրանսպորտային միջոց ներմուծումը և ազատ շրջանառության նպատակով բացթողնումը կամ ԵՏՄ անդամ պետություններից ներմուծումը կամ ՀՀ տարածքում օտարումը:
- 2.2027 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ՝ ԵՏՄ ԱՏԳԱԱ 8702 40 000, 8703 80 000 և 8711 60 ծածկագրերին դասվող և 2024թ-ի դեկտեմբերի 31-ից հետո թողարկված՝ էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների «Բացթողում» ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ձևակերպումը կամ ֆիզիկական անձանց կողմից որպես անձնական օգտագործման տրանսպորտային միջոց ներմուծումը և ազատ շրջանառության նպատակով բացթողնումը կամ ԵՏՄ անդամ պետություններից ներմուծումը կամ ՀՀ տարածքում օտարումը:

- Նախագծով առաջարկվում է նաև ԱԱՀ-ից ազատման արտոնությամբ ՀՀ ներմուծված էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցը ՀՀ ներմուծելուց հետո օրենքով նախատեսված դեպքում սահմանված ժամկետում գրանցման չներկայացնելու համար սահմանել տուգանք՝ հայտարարագրված արժեքի 20%-ի չափով:

Գյուղատնտեսական կենդանիների բրուցելոզ հիվանդության կանխարգելման և վերացմանն ուղղված միջոցառումների ծրագիրը և 2026-2030թթ. գյուղատնտեսական կենդանիների սեփականատերերին, վերամշակող ընկերություններին և սպանդանոցային ծառայություններ մատուցող տնտեսավարողներին աջակցության տրամադրման ծրագիրը (հասանելի հետևյալ հղումով)

- Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է ապահովել վերահսկողության այնպիսի համակարգ, որտեղ ռեսուրսները կուղղորդվեն բրուցելոզի դեպքերի նվազեցմանը, արդյունքում՝ կանխելով բնակչության շրջանում նոր դեպքերի հայտնաբերումը, կնվազեն անապահով բնակավայրերի, համայնքերի թիվը, կավելանան ապահով բնակավայրերի, համայնքերի թիվը, կիրականացվի բրուցելոզ հիվանդության ներթափանցման և տարածման ռիսկերի յուրովի գնահատում և կառավարում, ինչպես նաև բրուցելոզի վերահսկման քաղաքականության վերանայում՝ ըստ որի թեստ ու սպանդ միջոցառմանը զուգահեռ անցում կկատարվի խոշոր և մանր եղջերավոր կենդանիների բրուցելոզ հիվանդության դեմ պատվաստումներին:
- Արդյունքում՝ հանրապետությունում կստեղծվի, թերևս առաջին անգամ, կենդանիների վարակիչ հիվանդության նկատմամբ գոտիավորում և դասակարգում, իր ծրագրային ապահովմամբ և սպասարկումով:
- Միաժամանակ նախագծի ընդունման արդյունքում կապահովվի ոչնչացված կամ սանիտարական սպանդի (հարկադիր մորթի) ենթարկված կենդանիների սեփականատերերին փոխհատուցում տրամադրելու գործընթացի իրավակարգավորումը, քանի որ սեփականատերերին փոխհատուցում տրամադրելու գործընթացը կարևոր բաղադրիչ է հանդիսանում անասնապահության զարգացման խթանման համար, ինչը նաև բավականին լայն կիրառվում է միջազգային պրակտիկայում:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ